Azg
armenian daily
15 ՆՈՅԵՄԲԵՐ 2003 ՇԱԲԱԹ 210(2895)

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ ՀԱՄԱՐ

Դեմ են Մելգոնյան կրթական հաստատության փակմանը եւ վաճառքին

Կիպրոսի Մելգոնյան կրթական հաստատության տարբեր տարիների շրջանավարտների՝ Նիկոսիայի, Լոս Անջելեսի, Բեյրութի, Լոնդոնի, Աթենքի, Արաբական Միացյալ Էմիրությունների, Ստամբուլի, Տորոնտոյի եւ Մոնրեալի սանուց միություններն ու ՀԲԸՄիության մի շարք շրջանակներ նոյեմբերի 5-ին հանդես են եկել միացյալ հայտարարությամբ, Հայկական բարեգործական ընդհանուր միության Կենտրոնական վարչական ժողովին կոչ անելով մեկընդմիշտ հրաժարվել 77 տարվա պատմություն ունեցող կրթօջախը փակելու եւ տարածքը վաճառելու ծրագրից:

Նախանձախնդիր կրթօջախի առաքելության շարունակականությանը եւ, միաժամանակ, գիտակցելով նրա դիմագրաված նյութական դժվարությունները, կոչի հեղինակները պատրաստակամություն են հայտնում նյութապես օգնելու Մելգոնյանի տարեկան բյուջեի ճեղքվածքը փակելու գործին: Կոչը, որին կցված են դպրոցի փակման եւ տարածքի վաճառքի ծրագրի դեմ առարկությունները, անգլերենից թարգմանելով կհրատարակվի մեր թերթի առաջիկա համարներից մեկում: Մինչ այդ՝ մեր ներկա համարի 4-րդ էջում կարդացեք կիպրական մամուլից արտատպումը:

ՑԳՈ՛ՒՅՑ

Մահացու «Հումանա» մանկական սնունդը ներկրվել է նաեւ Հայաստան

«Ազգում» տպագրված Արմենպրեսի երեկվա հաղորդագրության մեջ նշվում էր, որ գերմանական ու իսրայելական «Հումանա», «Ռեմեդիա» եւ «Բեյբի սիթր» ֆիրմաների մանկական սննդից թունավորումներ են գրանցվել աշխարհի տարբեր երկրներում: Պարզվել է, որ դրանք եւս պատրաստվել են սոյայի հումքից: Սխալված չենք լինի, եթե ենթադրենք, որ գենետիկորեն մոդիֆիկացված օրգանիզմների կիրառման տեխնոլոգիան կիրառվել է եւ այստեղ:

ՀՀ գլխավոր պետական սանիտարական բժիշկ Դավիդյանից տեղեկացանք, որ մանկական սննդի այդ տեսակներից Հայաստան ներկրվում է միայն «Հումանան»: Հետեւելով ռուս գործընկերոջը՝ մեր գլխավոր սանիտարական բժիշկը եւս մթերքը վաճառքից հանելու հանձնարարական է հղել: Հայտնի է նաեւ ներկրող ֆիրմայի անունը՝ «Արա թրեյդինգ», որը գերմանական ֆիրմայի պաշտոնական ներկայացուցիչն է Հայաստանում:

Առողջապահության նախարարությունը նախաձեռնել է նաեւ «Հումանայի» փորձագիտական հետազոտություն, եւ դրա վաճառքն առայժմ ժամանակավոր է դադարեցվել՝ կախված փորձագիտության արդյունքներից: Հընթացս պաշտոնական հարցումներ են հղվել նաեւ Ռուսաստանի առողջապահության նախարարությանը եւ առողջապահության համաշխարհային կազմակերպությանը:

Իսկ սպառողական կազմակերպություններին մեր հարցադրումները, թե որքանո՞վ են տեղյակ հայկական շուկաներում վերոնշյալ ֆիրմաների արտադրանքի առկայությանը, բացասական պատասխանի արժանացան: Այս առթիվ որեւէ ուսումնասիրություն առայժմ չի կատարվել, իսկ Հայաստան մտնող արտադրանքի տեսականու մասին որեւէ կառույց որեւէ տեղեկություն չի տրամադրում, չնայած իրենց դիմումներին ու առաջարկներին:

Կ. Դ.

ԹԲԻԼԻՍԻ

«Երբեք չեմ արժանանա Չաուշեսկուի եւ Միլոշեւիչի ճակատագրին»

Շեւարդնաձեն կարող է հրաժարական տալ միայն նոր խորհրդարանի ձեւավորումից հետո

ԹԱԹՈՒԼ ՀԱԿՈԲՅԱՆ

Երեկ Վրաստանի նախագահը հատուկ ուղերձ է հղել վրաց ժողովրդին, կոչ անելով չմասնակցել ընդդիմության հանրահավաքին, զգուշացնելով քաղաքացիական առճակատման եւ քաղաքացիական պատերազմի հնարավոր վտանգից:

«Եթե ամբողջ վրաց ժողովուրդը պահանջի իմ հրաժարականը, ապա հրաժարական կտամ: Երբեք Չաուշեսկուի եւ Միլոշեւիչի ճակատագրին չեմ արժանանա», հեռուստաուղերձում ասել է Շեւարդնաձեն: Նախագահը նշել է, որ հենց նոր խորհրդարանն սկսի աշխատանքները, կարող է ինքը ստորագրել իր հրաժարականը: «Բայց այժմ, հրաժարականը կլինի անպատասխանատու քայլ», ասել է Շեւարդնաձեն:

Վրացական ընդդիմությունը երեկ մինչեւ ուշ գիշեր շարունակում էր բողոքի ցույցը՝ պահանջելով խորհրդարանական նոր ընտրություններ եւ Շեւարդնաձեի հրաժարականը: Վրացական լրատվամիջոցները հաղորդում են, որ նախագահի նստավայրի շուրջ եւ Ռուսթավելի պողոտայում ցուցարարների թիվը հասնում է 35 հազարի:

Ցուցարարներին առաջնորդում են ընդդիմադիր գործիչներ Միխայիլ Սահակաշվիլին, խորհրդարանի նախկին եւ ներկա նախագահներ Զուրաբ Ժվանիան եւ Նինո Բուրջանաձեն:

Տես էջ 8

Մ. Նահանգների հետ նորմալ առեւտրային հարաբերություններ հաստատելու ճանապարհին

Եթե Կոնգրեսը կամենա

ՌՈՒԶԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

«Հայաստանի անդամակցությունը Առեւտրի համաշխարհային կազմակերպությանը մեծ նվաճում էր, որը Մ. Նահանգները ողջունում ու սատարում է: Մենք աջակցում ենք, որ Կոնգրեսը Հայաստանին դուրս բերի այն երկրների շարքից, որոնց նկատմամբ գործում է Ջեքսոն-Վենիկի ուղղումը: Դրանով նորմալ առեւտրային հարաբերություններ հաստատելու ճանապարհ կբացվի», տնտեսական համագործակցության հայ-ամերիկյան աշխատանքային խմբի յոթերորդ հանդիպման կապակցությամբ երեկ հրավիրած մամլո ասուլիսի ժամանակ ասաց Հայաստանում Մ. Նահանգների դեսպան Ջոն Օրդուեյը: Նա հանդես եկավ հայտարարությամբ, ամփոփ ներկայացնելով նոյեմբերի 4-5-ը Վաշինգտոնում կայացած հանդիպման ժամանակ քննարկված հայ-ամերիկյան երկկողմ տնտեսական համագործակցությանն առնչվող հարցերն ու մեր երկրում ամերիկյան կառավարության օգնության ծրագրերը:

Տես էջ 2

Ռոբերտ Քոչարյանը վաղը կմեկնի Ռումինիա

Նոյեմբերի 16-ին Ռումինիայի նախագահ Իոն Իլիեսկուի հրավերով երեքշաբթի պետական այցով Ռումինիա կմեկնի Հայաստանի նախագահ Ռոբերտ Քոչարյանի գլխավորած պատվիրակությունը: Հանրապետության նախագահին կուղեկցեն արտաքին գործերի, կապի ու տրանսպորտի նախարարները, պատգամավորներ, Ռումինիայում ՀՀ դեսպանը, պաշտոնատար այլ անձինք, գործարարներ, լրագրողներ:

Այցի հիմնական նպատակն է խորացնել համագործակցությունը երկու երկրների միջեւ, նպաստել միջպետական կապերի զարգացմանը, ուրվագծել տնտեսական համագործակցության հեռանկարը, անցկացնել փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող խնդիրների շուրջ խորհրդաժողովներ, աջակցել երկու երկրների միջեւ առեւտրատնտեսական եւ գիտատեխնիկական համագործակցության ծրագրերի իրականացմանը, ինչպես նաեւ հաստատել սերտ համագործակցություն միջազգային կազմակերպություններում:

Նոյեմբերի 18-ի երեկոյան Հանրապետության նախագահի գլխավորած պատվիրակությունը կվերադառնա Երեւան:

ՀՀ նախագահի մամլո քարտուղարություն

Ռուսաստանը միշտ էլ նշանակալի դեր է խաղացել Հայաստանի պատմության մեջ

Հայտարարել է Վարդան Օսկանյանը Մոսկվայում

ՄՈՍԿՎԱ, 14 ՆՈՅԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Ռուսաստանը «միշտ էլ նշանակալի դեր է խաղացել Հայաստանի պատմության մեջ»: Այդ մասին Մոսկվայում հայտարարել է Հայաստանի արտգործնախարար Վարդան Օսկանյանը՝ նշելով, որ «ՌԴ արտգործնախարարությունում Ռուսաստանի կազմում Արեւելյան Հայաստանի մտնելու 175-ամյակին նվիրված ցուցադրանքի բացումը վկայում է մեր ժողովուրդների վաղեմի բարեկամության մասին»:

Ցուցահանդեսում ներկայացված են հազվագյուտ փաստաթղթեր: Գլխավոր ցուցանմուշները Հայաստանի պատմությանը նվիրված եզակի գրքերն են, այդ թվում՝ «Հայաստանի թագավորության համառոտ պատմական եւ աշխարհագրական ակնարկը», որը լույս է տեսել 1786 թվականին:

Հայաստանի արտգործնախարարը, Անաստաս Միկոյանի սեղանի շուրջ նստած, գրառում է կատարել տպավորությունների գրքում:

Դատավոր Սամվել Ուզունյանը հեռացավ խորհրդակցական սենյակ

«Հոկտեմբերի 27»-ի գործն ավարտուն համարելու համար պակասում է միայն դատավճիռը

ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կենտրոն եւ Նորք-Մարաշ առաջին ատյանի դատարանը երեկ շարունակեց «Հոկտեմբերի 27»-ի գործով դատավարությունը: Նախ նիստը տեխնիկական պատճառների բացատրությամբ սկսեց մոտ 1 ժամ ուշացումով, այնուհետեւ ամբաստանյալ Նաիրի Հունանյանը, ինչպես եւ խոստացել էր, սկսեց իր վերջին խոսքը:

Ըստ Հունանյանի վերջին խոսքի, խափանվել է մի ծրագիր (նկատի ունի ահաբեկչությունը), որի իրագործմանն ինքը հավատում էր: Ամբաստանյալի խոսքերով, դատարանում ոչ ոք չկարողացավ ապացուցել, որ իրենք սպանություններ են իրագործել: Ստացվում է, ըստ Հունանյանի, որ դատարանը կգնա խորհրդակցական սենյակ, բայց, օրինակ, Արմենակ Արմենակյանի սպանությունը կդիտարկվի որպես ամբաստանյալ Կարեն Հունանյանի մեղավորություն, քանի որ գործում եղած միակ վարկածը դա է, այսինքն՝ քրեական գործն այդպես է կազմվել:

Շարունակելով իր խոսքը, Հունանյանը նշեց, որ դատավարության ընթացքը չի եղել օրենքների շրջանակներում, տուժողներն ու վկաները մասամբ են հարցաքննվել, դատավարությունը 6 ամիս ընդմիջվել է անհասկանալի պատճառներով: Հունանյանը չմոռացավ նշել նաեւ, որ իր միջնորդությունների, բոլոր հայտարարությունների մեծ մասը մերժվել է կամ չի դրվել քննարկման:

Տես էջ 4

ԸՆԹԱՑԻԿ

Աներեւույթ թշնամի սննդամթերքի տուկայում

Գենետիկորեն մոդիֆիկացված օրգանիզմներով սննդամթերքն անարգել մտնում է Հայաստան

Որ սննդամթերքը կեղծված է, ժամկետանց կամ պահպանման անթույլատրելի պայմանների պատճառով կորցրել է որակական հատկանիշները, նույնիսկ միջին գրագիտության սպառողին է հասու: Սակայն այսօր հայկական սննդամթերքի շուկայում առկա է միանգամայն իրական մեկ վտանգ եւս, որի գոյությունը ոչ միայն շարքային գնորդի, այլեւ լաբորատոր հետազոտությունների հայաստանյան գինանոցի համար անմատչելի է: Համեմատաբար երիտասարդ գիտությունը գենային ինժեներիան, վերջին տարիներին ներխուժել է նաեւ սննդամթերքի արտադրության բիզնես: Աշխարհի շատ երկրների վաճառակետերում այսօր լայնորեն վաճառվում է գենետիկորեն մոդիֆիկացված (ձեւափոխված) օրգանիզմներ (ԳՄՕ) պարունակող սնունդ: Ներմուծելով դրանք տարբեր սննդատեսակների մեջ՝ արտադրողներն արհեստականորեն երկարաձգում են դրանց պիտանելիության ժամկետները, քանի որ ԳՄՕ-ները խիստ կայուն են հերբիցիդների, վարակակիր մանրէների նկատմամբ: Սիա ինչու երեխաների այնքան սիրած յոգուրտները երկար մնողներ կտրելով, հանգիստ բազմում են մեր սեղաններին: Նույնիսկ սառնարանային պայմաններում կաթնամթերքը 2 շաբաթից ավելի չի դիմանում, իսկ սրանց գործողության ժամկետն ամիսներ է:



Գենետիկորեն ձեւափոխված օրգանիզմները լայնորեն օգտագործվում են նաեւ գյուղատնտեսության մեջ: Հայտնի է, որ 2001 թ. աշխարհի տարբեր անկյուններում ֆերմերներն աճեցրել են ԳՄՕ-ներով բույսեր 125 մլն ակր տարածության վրա, դա 20 տոկոսով ավելին է եղել 2000 թ.-ից: Տարեցտարի գենային ինժեներիայի տեխնոլոգիաներն ընդլայնում են կիրառման շրջանակները՝ բույսեր, սերմեր, կենդանիների սննդի համար նախատեսված գյուղմթերքներ, պատվաստուկներով փոփոխված ոստուղներ, տրանսգեն կենդանիներ, դեղամիջոցների արտադրություն, ջերմոցներ եւ այլն:

Ինչպես եւ օրգանիզմի համար վնասակար քիմիական հավելանյութերը, ԳՄՕ-ների ազդեցությունն անմիջական չէ: Սակայն եթե առաջինները ներգործում են տարիների ընթացքում, ապա ԳՄՕ-ների գործողության մեխանիզմն ավելի ուշ է գործում՝ 2-րդ, 3-րդ, 4-րդ, մինչեւ 15-րդ սերնդի վրա:

Անցած տարվա հունվարին սննդամթերքի անվտանգության խնդիրներով զբաղվող ֆրանսիացի փորձագետները հայտարարեցին, որ ողջ աշխարհում լայն տարածում ստացած ալերգիան կարող է առաջանալ ԳՄՕ-ով սննդամթերքի երկարատեւ օգտագործման հետեւանքով: Հայաստանյան եւ շուկան, եւ սպառողն անպաշտպան են այս առայժմ աներեւույթ վտանգի հանդեպ: Անարգել ներմուծվում եւ Հայաստան տակավորվի: Դրանք են ԳՄՕ սոյան, եգիպտացորենը եւ կարտոֆիլը: Իսկ եթե ավելի մանրամասնենք, ապա՝ սոյայի հատիկներ, ծիլեր, կաթի փոխարինիչ (սոյայի կաթ), չոր կաթի փոխարինիչ (սոյայի չոր կաթ), պահածոյացված սոյա, եփած ու տապակած սոյայի հատիկներ, սոյայի ալյուր, սոուս, սոյայի կաթից ստացված մթերք՝ պաղպաղակ, մայոնեզ:

Եգիպտացորեն- ալյուր, ծավարեղեն, պահածոյացրած եգիպտացորեն, պոպկորն (ադի-բուդի):

Կարտոֆիլ- կարտոֆիլի չոր խյուս, փաթիլներ (խլոռոյա), չիպսեր, կարտոֆիլի կրեկերներ, կարտոֆիլով կիսաֆաբրիկատներ, արագ եփվող, չորացրած կարտոֆիլ, պահածոներ եւ այլն:

Ներկրված այս սննդատեսակների վրա ԳՄՕ-ի վերաբերյալ մակնշման նախարարի հրամանը, իհարկե, չի կատարվում: Իբրեւ նախազգուշական միջոց, սպառողը գոնե պետք է ուշադրություն դարձնի սննդամթերքի բաղադրության մակնշումներին եւ պարզապես հրաժարվի այն մթերքներից, որոնց մեջ կա եգիպտացորենի յուղ, եգիպտացորենի օշարակ, եգիպտացորենի կրախմալ, սոյայի սպիտակուց, սոյայի յուղ, լեցիտին, սոյայի սոուս, բամբակի յուղ, կանոլայի յուղ:

Սննդամթերքի որակի ու անվտանգության վերահսկողական մեխանիզմները մեզանում վաղուց ի վեր չեն գործում: Եվ քանի որ պարտադրող օրենսդրական լծակներն էլ չկան, ԳՄՕ-ներով ներծծված սննդամթերքը հանգիստ ներկրվում ու իրացվում է մեր շուկաներում:

ԿԱՐԻՆԵ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՀԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ

Հուշ-ցերեկույթ նվիրված Բաբկեն Չուգասզյանի ծննդյան 80-ամյակին

Հայ մշակույթի երախտավոր, գիտության նվիրյալ սպասավոր, Մաշտոցի անվան Մատենադարանի երկարամյա տարիների փոխտնօրեն Բաբկեն Չուգասզյանի ծննդյան 80-ամյակը նշվեց երեկ ՀԳՄ մեծ դահլիճում:

Երաժշտական հրաշալի կատարմանը հաջորդեց «Մատենադարան» ֆիլմաշարից Բաբկեն Չուգասզյանին նվիրված տեսաժապավենից հատված: Հոբելյանական օրվա առիթով հավաքված մտավորականներն, իբրեւ Բաբկեն Չուգասզյանի գիտական երկար տարիների աշխատանքային գործունեության վկաներ, իրենց հիշողությունների տպավորություններով ամբողջացրին անխոնջ գիտնականի եւ ազնիվ քաղաքացու կերպարը:

Բաբկեն Չուգասզյանը ծնվել է 1923 թ. Թավրիզում, սեբաստացու ընտանիքում: Սովորել է տեղի Հայկազյան-Թամարյան եւ Արամյան, ապա՝ պարսկական եւ ամերիկյան կրթարաններում: Աշխատել է Թեհրանում եւ Թավրիզում: 1946 թ. 23 տարեկանում ընտանիքի հետ տեղափոխվում է Հայաստան, 1946-ին ընդունվում է ԵՊՀ բանասիրական ֆակուլտետը, ավարտելուց հետո աշխատում համալսարանի հրատարակչությունում, 1955-ից՝ գրականության ինստիտուտում, իսկ 1965-ից արդեն Մատենադարանում՝ գիտական գծով փոխտնօրեն:

Բաբկեն Չուգասզյանի կյանքի եւ գիտական գործունեության էջերը վերհիշելով՝ իրենց ելույթներում ԳԱԱ իսկական անդամ, Մատենադարանի տնօրեն Սեն Արեւշատյանը, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Պարույր Մուրադյանը, ԵՊՀ հրանագիտության ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գառնիկ Ասատրյանը արժեւորեցին գիտնականի երկար տարիների վաստակը:

Հուշ-ցերեկույթի բացման խոսքում «Սեբաստիա» հայրենակցական միության նախագահ Գրիգոր Գույումջյանն անդրադարձավ գիտնականի գործունեության ավելի փիլ հայտնի էջերին: Խորհրդային գաղափարախոսության եւ քաղաքականության խստագույն եւ ամենափակ շրջանում Բաբկեն Չուգասզյանն իր ձայնն է բարձրացրել հոգուտ հայրենակցական միությունների ակտիվ գործունեության, սփյուռքահայ կյանքի ընդարձակ լուսաբանման, կրթարանների եւ մայրաքաղաքի փողոցների վերանվանման եւ նման շատ հարցերի: Կյանքի առաջացած տարիքում նա նախաձեռնեց եւ հիմնադրեց «Սեբաստիա» հայրենակցական միությունը:

Բաբկեն Չուգասզյանի գիտական վաստակը հիրավի գնահատելի եւ մեծ է նրա կատարած աշխատանքը հատկապես Մատենադարանի ձեռագրային հավաքածուները հարստացնելու գործում: Մատենադարանի տնօրեն Սեն Արեւշատյանի վկայությամբ, 1965-94 թթ. փոխտնօրեն աշխատելու տարիներին նրա շնորհիվ հայրենադարձվել կամ կորստից փրկվել են մի քանի տասնյակ ձեռագրեր, արխիվային փաստաթղթեր, հնատիպ գրքեր: Ձեռագրերի որոնման դժվարին աշխատանքները կատարել է ամենայն նախանձախնդրությամբ՝ շրջելով գյուղից գյուղ, ավանից ավան, մի ձեռագրի հետեւից հասնելով օվկիանոսից այն կողմ: Այս առիթով Սեն Արեւշատյանը հիշեց մի ձեռագրի պատմություն: 1906 թ. Հրաչյա Աճառյանը Թավրիզում ծանոթանում է «Բժշկարան ծիոյ եւ առհասարակ գրաստոց» ձեռագրին եւ հիացմունքով արտահայտվում. «Ի՞նչ ձեռագիր էր, ամբողջ Թավրիզն արժեր ինձ համար»: Ժամանակներ անց ձեռագիրն անհետանում է: Միայն 1971 թ., երբ ամերիկահայ պրոֆ. Ավետիս Սանջյանը տեղեկացնում է Լոս Անջելեսում հայտնված ձեռագրի մասին, գիտնականը մեկնում է ԱՄՆ, գտնում այդ մարդկանց, պատճենահանում ձեռագիրը եւ երեւանում ծավալուն ներածականով հրատարակման պատրաստում: Գիտական այս հրատարակության հիման վրա անցյալ տարի Զալցբուրգի համալսարանը թարգմանաբար հրատարակման է պատրաստել «Բժշկարան ծիոյ եւ առհասարակ գրաստոց» ձեռագիրը՝ արժեւորելով Չուգասզյանի վաստակը ձեռագրի փրկության գործում:

«Հայ-իրանական գրական կապերը» թեկնածուական թեզի հրատարակմանը հաջորդեցին գիտնականի բազմաթիվ արժեքավոր ուսումնասիրություններ, որոնցից հիշատակվեցին սեբաստահայերին նվիրված երկհատորյակը (Սեբաստիայի պատմությունը՝ սկսած Սբ. Նշան վանքի հիմնադրումից (XI դար) մինչեւ XIX դարի 40-ական թվականները): Տասնյակ-հարյուրավոր գիտական հոդվածների, պարսկերեն-հայերեն բացատրական բառարանի, բազմաթիվ ուսումնասիրությունների հեղինակը լուրջ հետաքրքրություն է ունեցել հատկապես միջնադարյան հայ մշակույթի հանդեպ: Ըստ որում, ի տարբերություն անգամ Մանուկ Աբեղյանի, որ միջնադարյան հայ մշակույթը դիտարկում էր միայն գեղարվեստական գրականություն որոնելու մեկնակետով, Բաբկեն Չուգասզյանի ուսումնասիրությունների ծավալն ընդգրկում էր միջնադարյան հայ ողջ մատենագրությունն ընդհանրապես: Նա վստահորեն եւ հմտությամբ էր անդրադառնում իրեն նախորդած հայտնի ձեռագրագետների բնագրային ուսումնասիրություններին եւ առհասարակ գիտական ոլորտի յուրաքանչյուր խնդրի:

Ելույթներն ընդմիջող գեղարվեստական հայտագիրը ցերեկույթին հաղորդում էր ջերմ ու բանաստեղծական շունչ: Ազատ Գասպարյանի չարենցյան շեշտադրումով ասմունքը, Դ. Վարուժանի անվան միջնակարգ դպրոցի երգչախմբի ելույթները, ապա եւ Երվանդ Մանարյանի, Վերոնիկա Գեւորգյանի, Ժոզեֆ Ավետիսյանի, Օֆելյա Պետրոսյանի խոսքերը հարգանքի տուրք էին արժանի հայորդու, մտավորականի, գիտնականի հիշատակին:

ՄԵԼԱՆՅԱ ԲԱԳԱԼՅԱՆ

Մ. Նահանգների հետ նորմալ առեւտրային հարաբերություններ հասնելու ճանապարհին

Սկիզբը էջ 1

Եվ այսպես, հերթական անգամ ենթարկման են դրվել կոռուպցիայի դեմ պայքարի, տնտեսական զարգացման բնագավառում ամերիկյան տեխնիկական օժանդակության, օրինապահության, համաշխարհային առեւտրի եւ էներգետիկայի ոլորտներին առնչվող հիմնախնդիրները: Երկու երկրների կառավարությունները մտադիր են գործողությունների ծրագրի նախագիծ ընդգրկելով կողմերի հանձնառությունները եւ հանդիպումից հետո առանձնացված խնդիրները: Ծրագիրը վերջնական տեսքի կբերվի եւ երկուստեղ կստորագրվի առաջիկա շաբաթներին, որից հետո կվերանայվի 2004 թվականի սկզբին անցկացվելիք միջանկյալ քննարկման ժամանակ: Կոռուպցիայի դեմ պայքարի համագործակցության համաձայնություն է ձեռք բերվել, ինչպես նաեւ քննարկվել են փոքր եւ միջին ձեռնարկությունների եւ բանկային ոլորտի զարգացման առաջադրանքները: Կարեւորվել է էներգետիկայի բնագավառում ռազմավարություն մշակելու անհրաժեշտությունը՝ էներգիայի աղահովման անվտանգ, կայուն եւ հուսալի աղբյուր ստեղծելու նպատակով:

Այնուհետեւ պրն Օդուեյը պատասխանեց լրագրողների հարցերին: Դրանք ամենից առաջ վերաբերում էին Ադրբեջանում եւ Վրաստանում տեղի ունեցած ընտրություններին եւ տարածաշրջանային զարգացումների վրա դրանց ազդեցությանը, Հարավային Կովկասում Մ. Նահանգների եւ Ռուսաստանի դիրքերի ամրապնդման մրցակցությանը, դարաբաղյան հիմնախնդրի կարգավորմանը, դեպքանատան նոր բենզի տարածքի մեծությանը, ՁԼՄ-ների մասին նոր օրենքին եւ այլն: Նա հայտնեց, որ ամերիկյան վարչակազմը հիասթափված է թե Հայաստանում, թե Ադրբեջանում տեղի ունեցած նախագահական ընտրություններից, իսկ Վրաստանի խորհրդարանական ընտրությունների գնահատականը դեռեւս տրված չէ: Սակայն դա բնավ չի նշանակում, որ պետք է դադարեցնել այդ երկրներում ժողովրդավարություն հաստատելու իրենց ջանքերը: Մ. Նահանգներն ու Ռուսաստանը Հայաստանին աջակցելու խնդրում որեւէ տարաձայնություն չունեն, ընդհակառակը՝ նրանց շահերը համատեղելի են: Դեսպանը նշեց, որ Հայաստանում ամերիկյան ներդրումային դաշտը ընդլայնելուն խոչընդոտում են դարաբաղյան հակամարտության գործոնը եւ տրանսպորտային կապի խնդիրները: «Եթե որեւէ ամերիկացի ներդնող իմ կարծիքը հարցնի, ես, իհարկե, կասեմ, որ Հայաստանում արժե ներդրում անել, սակայն դա դեռ ոչինչ չի նշանակում, դրա համար հուսալի երաշխիքներ են պետք», ասաց նա: Հետաքրքրական էր դեսպանատան նոր բենզի տարածքի վերաբերյալ նրա պատասխանը. «Երեւի ոչ մի երկրում Մ. Նահանգների որեւէ դեսպանատուն այդպիսի մեծ տարածք երբեւէ չի ստացել, սակայն դա կապված է հատկապես տեղանքի դիրքի հետ: Ձառիթափի պատճառով այնտեղ մեկ այլ շինություն հնարավոր չէ կառուցել», նշեց դեսպանը:

«ԱԶԳ»-ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության 79 տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 375010, Հանրապետության 47
Ֆաքս՝ 374-1-562863
e-mail: azg2@arminco.com
www.azg.am
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ. 529221
Լրագրողների սենեակ
/ հեռ. 581841
Համակարգ. ծառայութիւն
/ հեռ. 582483
Apple Macintosh
համակարգչային շարուածքը
«Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական կամ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով կամ ռադիոհեռուստատեսութեամբ, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան, խստիւ արգելւում են, համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
«AZG» DAILY NEWSPAPER
Editor-in-chief
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.
Yerevan, Armenia, 375010

ԸՆԹԱՑԻԿ

Երեկ գիտեր ժամը 24-ից տեղեկատվության ազատության ՀՀ օրենքը մտավ գործողության մեջ

Տեղեկություն տրամադրելուց հրաժարվող պաշտոնյային սպասվում է նվազագույն աշխատավարձի 50-100-ապատիկի չափով տուգանք

Հայաստանն ափխարհի 54-րդ երկիրն է, ուր սկսեց գործել տեղեկատվության ազատության օրենքը: Երեկ օրենքի նախագծի հեղինակներ Վիկտոր Դալլաֆյանը, Վարդան Բոստանջյանը, օրենքի ստեղծմանն աջակից «Տեղեկատվության ազատության կենտրոն», «Քաղաքացիական հասարակության ինստիտուտ», «Տեղեկատվական իրավունքի ինստիտուտ» հասարակական կազմակերպությունները եւ լրատվամիջոցների ներկայացուցիչները տոնում էին իրենց հաղթանակը: Հանդիսությանը մասնակցում էին ՀՀ-ում Մեծ Բրիտանիայի դեսպանը, միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ, ԱԺ պատգամավոր Շավարշ Քոչարյանը:

Եթե նկատի առնենք, որ ԱՄՆ-ի նման երկրում այս օրենքն ընդունվել էր ընդամենը 1966 թվականին, արդա մեր համեստ պետության համար դա իսկապես մեծ նվաճում կարելի է դիտարկել:

Եվ այսպես, ի՞նչ է տալիս օրենքը հասարակ քաղաքացուն ու լրագրողին: Նախ եւ առաջ, պետական կառույցներն այսուհետեւ պարտավորվում են առավելագույնը 5-օրյա ժամկետում տեղեկություն տրամադրել նրանց, ամեն տեսակի տեղեկություն, բացառությամբ պետական, բանկային, առեւտրային գաղտնիք պարունակողներից:

Տեղեկություն տրամադրել հարկադրված են նաեւ մասնավոր կազմակերպությունները, որոնք նույնիսկ գերիշխող դիրք են գրավում տնտեսությունում: Հասկանալի է, թե ինչպիսի տաճ անակնկալ կլինի դա նրանց համար: Ի դեպ, թե պաշտոնյաների, թե գործարարների մեծամասնությունը, որոնք ծուռ աչքով են նայում հասկապես լրագրողին տեղեկություն տրամադրելու անհրաժեշտությանը, ամենայն հավանականությամբ դեռ գլխի չեն, թե նոր օրենքն ինչ «լիազորություններից» է զրկել իրենց:

Օրենքն օգնության է գալիս նաեւ այն պաշտոնյաներին, ովքեր գիտեն հասարակական անվտանգությանն սպառնացող որեւէ իրողություն, գաղտնիք, բայց չեն ասում պատժից վախենալով: Հիմա կպատժվեն, եթե չասեն:

Այս բոլորից անկախ, օրենքը տեղեկություն տնօրինողին, լինի պաշտոնյա թե ուրիշ մեկը, պարտավորեցնում է տարին առնվազն մեկ անգամ հրապարակել իր գործունեությանն առնչվող տեղեկատվություն, ինչպես օրինակ՝ բյուջեն, հաստիքացուցակները, թափուր աշխատատեղերը, երբակա միջավայրի վրա ներգործությունը եւ այլն: Այսինքն, օրենսդրական հարկադրանքով մեր իշխանությունների բոլոր օղակները հասարակության բոլոր շերտերի համար բաց ու թափանցիկ պիտի դառնան:

Սակայն երաժշտություն պիտի լինի, որ ծափ տաս: Որքանո՞վ կիրառելի կդառնա օրենքը Հայաստանում: Մեր այս հարցին Շավարշ Քոչարյանը պատասխանեց. «Համակարգը հակված չէ թափանցիկության, մենք դեռ իրավական պետություն չենք, որ օրենքը պարտադիր գործի: Նույնիսկ ամենալավ օրենքը կյանքի կոչելու համար պայքարել է պետք: Մեծ դիմադրություն լինելու է, անկասկած»:

Իսկ եթե պաշտոնյաներն, այնուամենայնիվ, հրաժարվեն տեղեկություն տրամադրե՞լ: Օրենքի նախագծի համահեղինակ Վիկտոր Դալլաֆյանը հաստատել է հոգալ նաեւ այդ մասին: ԱԺ-ն առաջին ընթերցմամբ արդեն ընդունել է նրա օրենսդրական նախաձեռնությունը «Վարչական իրավախախտումների մասին» օրենքում փոփոխություններ անելու մասին: Նոր լրացումն ամրագրում է՝ նրանք, ովքեր կհրաժարվեն տեղեկություն տրամադրելուց կամ կխոչընդոտեն, սիրված կլինեն վճարել նվազագույն աշխատավարձի 50-100-ապատիկի չափով տուգանք:

Հանդիսությունն ավարտվեց օրենքի ստեղծմանը մասնակից հասարակական երեք կազմակերպությունների միասնական հուշագրի ստորագրմամբ, որի նպատակը պիտի լինի երեք կազմակերպությունների միավորումը՝ միասնաբար աջակցելու տեղեկություն ստանալու Հայաստանի յուրաքանչյուր քաղաքացու իրավունքի պաշտպանությանը:

ԿԱՐԻՆԵ ԴԱՆԻԵԼՅԱՆ

Հայաստան-սփյուռք տեղեկատվական համաժողով Ծաղկաձորում

Այսօր եւ վաղը Ծաղկաձորում անցկացվելու է Հայաստան-սփյուռք առաջին տեղեկատվական համաժողովը, որին մասնակցում են Հայաստանում եւ արտասահմանում գործող լրատվամիջոցների 150 ներկայացուցիչներ: Նրանք կքննարկեն համահայկական ընդհանուր լրատվական դաշտի ստեղծման եւ դրանում խաղի կանոնների մշակման խնդիրները: Նրանք, ովքեր չեն կարողացել սփյուռքից հայրենիք գալ, քննարկմանը կարող են մասնակցել ինտերնետի միջոցով: Երեկ ռադիոտան մամուլի սրահում համաժողովի կազմկոմիտեի անդամները հանդիպեցին լրագրողների հետ: Նման համաժողով, որը կհամախմբի հայրենիքի եւ սփյուռքի լրատվամիջոցների ներկայացուցիչներին, հայկական մամուլի սկզբնավորումից ի վեր առաջին անգամ է կազմակերպվում: «Առաջին անգամ փորձ է արվում ընդհանուր խնդիրներն իրար կողքի դնել եւ հասկանալ՝ ում ինչն է խանգարում առավել արդյունավետ աշխատելու: Ինչպես անել, որ համազգային շահերը դառնան գերակա», նշում է «Նոյյան տապան» լրատվական-վերլուծական կենտրոնի տնօրեն Տիգրան Հարությունյանը:

Հանրային ռադիոյի գործադիր տնօրեն Արմեն Ամիրյանի խոսքով, որոշումները դեռեւս ընդունված չեն: «Ամեն բան ստեղծվելու է քննարկումների արդյունքում, ընդհանուր խաղի կանոնները որոշվելու են Ծաղկաձորում»:

Տեղեկատվական համաժողովի գաղափարը Հայաստան- սփյուռք համաժողովների կայացրած որոշումների արդյունք է: Բնական է, դժվար է գերագնահատել լրատվամիջոցների դերը հայրենիք-սփյուռք կապերի ամրապնդման գործում: Այս մասին նշում են նաեւ համաժողովի կազմակերպիչները: Եվրոպայի հայկական միությունների ֆորումի քարտուղար Թորոս Սակերյանի խոսքով, անհրաժեշտ է օգտագործել ինչպես հայալեզու, այնպես էլ օտար մամուլում աշխատող հայ մասնագետների ներուժը՝ դրանք ծառայեցնելով ազգային խնդիրներին:

«Որեւէ երկրում լրատվամիջոցները չեն կարող դուրս մնալ ընդհանուր ազգային շահերից», նշում է նա: Թեեւ սփյուռքի եւ հայրենիքի լրատվամիջոցների խնդիրները տարբեր են, նպատակը պետք է մեկը լինի՝ հայապահպանությունը:

Մ. Հ.

Մամուլի ազատության օրինագիծը կմտնի՞ մեծ օրակարգ

ԱԺ պետահրավական մշտական հանձնաժողովից Ռաֆիկ Պետրոսյանը տեղեկացնում է, որ եկող շաբաթվա եռօրյա նիստերի ժամանակ խորհրդարանը կվերակի մամուլի ազատության օրինագիծը մեծ օրակարգ մտցնելու հարցը: Նշենք, որ այս նախագիծը վերակության կդրվի հանձնաժողովի բացասական եզրակացությամբ:

Հաջորդ շաբաթ եռօրյա նիստերի օրակարգում խորհրդարանը կանդրադառնա 19 օրինագծի, կհաստատի 12 միջազգային պայմանագիր:

Ա. Հ.

Լեւոն Անանյանը ժամանեց Լոս Անջելես

Նոյեմբերի 13-ին, կեսօրից հետո՝ ժամը 2-ին Լոս Անջելես ժամանեց Հայաստանի գրողների միության նախագահ Լեւոն Անանյանը: Նրան օդանավակայանում դիմավորեցին հրավիրող հանձնախմբի անդամներ, գրչակից ընկերներ: Համաձայն նախապես եղած հաղորդագրությունների, Լոս Անջելեսում Հայաստանի Հանրապետության գլխավոր հյուպատոսության նախաձեռնությամբ կազմված հանձնախումբը, Կալիֆոռնիայի Հայ գրողների միության ստեղծման հետ կապված նախնական աշխատանքների լրացման արդյունքում, հրավիրել է հիմնադիր ընդհանուր ժողով, որին մասնակցելու է Լ. Անանյանը: Ժողովը գումարվելու է շաբաթ օրը՝ նոյեմբերի 15-ին, երեկոյան ժամը 4:30-ին, Լոս Անջելեսի Իրանահայ միության կենտրոնում:

«Կասկադ» եռյակը կմասնակցի հեռուստամարաթոնին

Գլենդեյլից ստացված հաղորդագրությունը տեղեկացնում է, որ «Կասկադ» ժողովրդական երգերի եռյակը մասնակցելու է նոյեմբերի 27-ին տեղի ունենալիք «Հայաստան» հիմնադրամի հեռուստամարաթոնին, որի ընթացքում խումբը կատարելու է իր վերջին՝ «Հին փողոց» ալբոմից երգեր: «Մենք բոլորին խրախուսում ենք մասնակցելու այս հայրենանվեր միջոցառմանը», այս առթիվ ասել է երգիչ Արման Աղաջանյանը:

«Հայաստան» համահայկական հիմնադրամի մասնաճյուղը Գլենդեյլում հիմնադրվել է 1993-ին, եւ անցյալ մեկ տարվա ընթացքում, ըստ հաղորդագրության, կարողացել է հանգանակել 20 մլն ամերիկյան դոլար՝ Հայաստանին եւ Արցախին նպատակաուղղված տարբեր մարդասիրական ծրագրերի համար:

Հ. Ծ.

ՖՐԱՆՍԻԱ-ՀԱՅԱՍՏԱՆ

Քանի դեռ չեն ընդունել հայերի ցեղասպանությունը

Բուզ դյու Ռոն նահանգի մարզային խորհրդի պատվիրակությունը ամեն ջանք կգործադրի, որ Թուրքիան չմտնի եվրամիություն, քանի դեռ վերջինս չի ընդունել Հայոց ցեղասպանությունը: Այս մասին երեկ լրագրողներին ասաց խորհրդի նախագահ Ժան-Նոել Գերինին: Հայաստանի հետ ծրագրերը, որ խորհուրդն իրականացնում է, հիմնականում սոցիալական, առողջապահական, կրթական ոլորտներում են:

Սոչիայի երկրաշարժից հետո «Բարձունք 5165»-ի հետ իրականացրել են օգնության ծրագիր Գյումրիում, Սոչիայում, Վանաձորում: «Բարձունք 5165»-ը, օրինակ, 45 բեռնարկղ դեղամիջոց է ուղարկել աղետի գոտի:

Մարզային խորհրդի պատվիրակության ղեկավար Ժան-Նոել Գերինիի խոսքերով՝ Մարսելում 80.000 հայ եւ հայկական բազմաթիվ կազմակերպություններ կան: Մարզային խորհուրդը լսում է այդ կազմակերպությունների առաջարկությունը եւ նոր կույթի միջոցով ընդհանրապես շատ բան կարելի է հաղորդել: Իմ երազանքն է երեւանում եւ Գյումրիում Բուզ դյու Ռոնի մշակութային շաբաթ կազմակերպել», ասաց պրն Գերինին:

Այսօր հյուրերը լինելու են Գյումրիում, հանդիպելու են տեղի մանկատան երեխաներին, իսկ դեկտեմբերին «Ծննդյան տոն Գյումրու երեխաների համար» ծրագրի շրջանակներում 12.000 խաղալիք կնվիրեն նրանց:

ԹԱՄԱՐ ՄԻՆԱՍՅԱՆ

Սփյուռքահայերը Նոր տարին կնշեն Հայաստանում

2003-2004 թթ. դեկտեմբերի 28-ից հունվարի 6-ը Զբոսաշրջության զարգացման ազգային գործակալությունը (ԶԶԱԳ) ծրագրում է անցկացնել «Հայաստանում մշակութային վերածննդի շաբաթ»: Այդ մասին երեկ տեղեկացրեց գործակալության գործադիր տնօրեն Նինա Հովնանյան-Ալեխանյանը: Նրա կարծիքով, Հայաստանից դուրս բնակվող հայերը պետք է իմանան, որ Նոր տարին տոնելու ամենալավ վայրը Հայաստանն է: «Մեր նպատակն է ներկայացնել աշխարհին Հայաստանը եւ ցույց տալ, որ բացի հուշարձաններից, մեր երկրի մշակութային եւ զվարճանքի վայրերը նույնն են, ինչ աշխարհում», նշեց տկն Հովնանյան-Ալեխանյանը: Բացի այդ, հարկ է աղացուցել, որ մայիս-հունիս կամ սեպտեմբեր-նոյեմբեր ամիսները չեն միայն մեզ մոտ զբոսաշրջային ժամանակաշրջան, այլ տարվա 365 օրը:

«Սա ավելին է, քան միայն վերադարձ հայրենիք արձակուրդներին: Սա ավելի շուտ մի նոր ավանդույթի սկիզբ է: Հայ ժողովուրդն աշխարհի ամենահյուրընկալ ազգերից է: Ամենորը վառ ապացույց է այդ հյուրընկալության եւ սիրո արտահայտման», ասաց ԶԶԱԳ գործադիր տնօրենը, ավելացնելով, որ բոլոր վերանորոգված թանգարանները, երաժշտական դահլիճները, ցուցասրահները, պատկերասրահները, հյուրանոցային եւ ռեստորանային համալիրները պատրաստ են ընդունելու հյուրերին:

Կոնկրետ ծրագրի մասին բոլոր մանրամասները չհաղորդվեց, քանի որ այն դեռեւս գտնվում է մշակման փուլում: Սակայն տեղեկացվեց, որ նախատեսվում է Սուրբ Ծննդյան գիշերն անցկացնել էջմիածնում, գալա-համերգ հրավիրել օպերայի թատրոնում, մեծ ճաշկերույթ-պարահանդես անցկացնել:

Մամուլի ասուլիսին ներկա զբոսաշրջային գործակալությունների ներկայացուցիչները նշեցին, որ առանձին-առանձին նրանք չէին կարող նման մեծ միջոցառումներ կազմակերպել, բայց այս նախաձեռնության շնորհիվ դա նրանց կհաջողվի: Իսկ ԶԶԱԳ գործադիր տնօրենն էլ հայտնեց, որ իրենց գործակալությունն աշխատել է այլ գործակալությունների, օդանավակայանների, հյուրանոցների, մշակութային հաստատությունների հետ, որպեսզի նախատեսվող ծրագիրը կյանքի կոչվի:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Զրմուղը խոստանում է

Նոյեմբերի 14-ին «Ազգ» օրաթերթում տպագրված «Արտակարգ իրավիճակ Երեբունու Ավանեսովի 2-րդ նրբանցքում» հոդվածի կապակցությամբ տեղեկացնում եմ, որ նշված հասցեում մրցույթով շահած «Երեւանջրշին» կազմակերպությունը կատարում է շինարարական-մոնտաժային աշխատանքներ (փոխվում է կոռոզիայի ենթարկված եւ շարից դուրս եկած L=450 մ d=200 մ խողովակաշարը), ներկայումս կատարվում են խողովակաշարի փորձարկման աշխատանքներ, ավարտելուց հետո կկատարվեն հեղլիցի եւ բարեկարգման աշխատանքները, ժամկետ՝ մինչեւ նոյեմբերի 20-ը:

Հարկ եմ համարում նշել, որ ամբողջ շինարարության ընթացքում փողոցի ջրամատակարարումը չի ընդհատվել, իսկ հարակից շենքի նկուղում հավաքված ջրերը մենք կարտամղենք:

ՌՈԲԵՐՏ ԲԱԲԱՅԱՆՅԱՆ

Երեւանի «Զրմուղ-կոյուղու» «Երեբունի» մասնաճյուղի տնօրեն

Երթևեկության անվտանգության ասպարեզում իրավական դաշտը զրոյական մակարդակում է

«Գոլոս Արմենիի» թերթի նոյեմբերի 13-ի համարում նույն խնդրի վերաբերյալ նույն ոլորտի 3 պաշտոնյա իրարամերժ երկու կարծիք էին արտահայտել: Քաղաքաշինության տրանսպորտի վարչության պետ Արեգ Բարսեղյանը գտնում է, որ երթուղային տաքսիների վարորդներն իրավունք ունեն որեւէ տեղում կանգառ անել՝ ըստ ուղեւորի ցանկության: ՀՀ դատախազության վարչության պետ Գեւորգ Դանիելյանը հակառակը, պնդում է, որ անվտանգ երթեւեկությունը խոցելի է դարձնում այն իրողությունը, որ երթուղային տաքսիների վարորդները, դարձյալ ուղեւորի ցանկությամբ, խախտելով օրենքը՝ կանգնում են ուր պատահի, նաեւ անթույլատրելի հատվածներում: Տվյալ դեպքում, իհարկե, ճշմարտությունը երկրորդ պաշտոնյայի կողմն է, քանի որ ճանապարհային երթեւեկության կանոնների համաձայն, ընդհանուր օգտագործման փոխադրամիջոցները, որոնց թվում են նաեւ երթուղային տաքսիները, պարտավոր են կանգնել միայն հատուկ նշված կանգառներում:

Սակայն եթե նույնիսկ ոչ պակաս պատասխանատու դիրք գրավող առաջին պաշտոնյան անհրաժեշտ է տրանսպորտային կարգուկանոնի այդ կարեւոր բաղադրամասին, վարորդների եւ ուղեւորների գրագիտության մասին ավելորդ է խոսելը: Տրանսպորտային իրականությունը մեզանում նմանվում է անմշակ խոպանի, որը վաղուց ի վեր հերկման ու սրբագրումների կարիք ունի:

Ըստ կարգի, ընդհանուր օգտագործման փոխադրամիջոցները տարեկան 2 անգամ տեխնիկական զննումներ պիտի անցնեն: Այսօր տեխնիկական վիճակի լավ կամ վատ լինելու սուբյեկտիվը միայն անհրաժեշտ մուծումների առկայությունն է:

«Ճանապարհային երթեւեկության ասպարեզում մեր իրավական դաշտը զրոյական մակարդակում է», ասում է վարորդների իրավունքների պաշտպանության «Միլլես» միության նախագահ Էդուարդ Հովհաննիսյանը: Գրեթե բոլոր ոլորտներում պարտաճանաչորեն զինվորագրվելով միջազգային կոնվենցիաներին, այս մեկում հաստատես ամայություն է տիրում նաեւ այս տեսանկյունից: Ճանապարհային երթեւեկության միջազգային կոնվենցիան դեռ 1997 թ. ստորագրել է ՀՀ առաջին նախագահը, բայց առ այսօր չի վավերացվել: Ճանապարհային երթեւեկի ոչ մի օրենք չի գործում մեզանում, առավել եւս անվտանգության խնդիրների վերաբերյալ: Իսկ եթե մայր օրենքը չկա, իրավիճակից բխող ենթաօրենսդրական ակտերի գոյությունը բացառվում է: Ճանապարհային երթեւեկի անվտանգության օրենքի նախագիծը երկար տարիներ տեղադրված է տալիս այդպես էլ չհասնելով Ազգ:

Խորհրդային տարիներին ընդունված կարգի համաձայն, մեքենաների տեխնիկական զննումները ըստ 40 պահանջների էին ներառում, որոնց համապատասխանության դեպքում միայն մեքենան շահագործման համար պիտանի էր համարվում: Այսօր այս խիստ կարեւոր գործառույթը ծեւական դերակատարում է ստացել: Էդուարդ Հովհաննիսյանի կարծիքով, փոխադրամիջոցների տեխնիկական անվտանգության ստուգումները չպետք է թողնել պետավտոտեսուչների հույսին: Դրա համար մրցութային կարգով կարելի է ստեղծել հատուկ ծառայություններ, որոնց կարտոնվի մեքենաների անվտանգության ստուգումները:

Այդ կառույցները պարտադրաբար արդեն կունենան այն բոլոր միջոցներն ու պայմանները, որոնք այսօր բացակայում են պետավտոտեսչությունում: Տեխզննման կետերը սովորաբար փոքր տարածք են զբաղեցնում, շատերը նույնիսկ հանրահայտ «յամկա»-ները (փոսեր) չունեն, օրինակ, Արաբկիրի համայնքի տեխսպասարկման կայանը: Տարիների հետ սրա տարածքը սեղմվեց՝ տեղը զիջելով ռեստորանի ու սրճարանի, եւ, բնականաբար, բռաչափ հատվածում տեխնիկական որեւէ ստուգում հնարավոր չէ իրականացնել:

Այլ խնդիր է վարորդների ամենօրյա բժշկական ստուգումների բացակայությունը: Խորհրդային տարիներին դա եւս խստորեն իրականացվող կարգ էր: Դրա անհրաժեշտությունն այսօր առավել քան անհրաժեշտություն է, նկատի առնելով այն պայմանները, որում այսօր հայտնվել են երթուղային տաքսիների վարորդները: Շատ երթուղիներում գործում է առանց հերթափոխի աշխատանքի սկզբունքը: Վարորդը երբեմն 1-14 ժամ ղեկի մոտ է, եթե որեւէ հիվանդությամբ չի էլ տառապում, ապա գերլարվածությունից կամ գերհոգնածությունից հատատ առողջական վիճակի որեւէ խաթարում կստանա: Դժվար մեր ժամանակներ, որոնց կարտոնվի մեքենաների անվտանգության ստուգումները:

Ինչպես ասվեցին, հիպերտոնիկ ախտերը զանգվածային տարածում են ստացել: Ո՞վ է ստուգել, թե երթուղիների հազարավոր վարորդներից քանի՞սն են տառապում խրոնիկական այլ հիվանդություններով եւս: Մեր տատերն ասում էին՝ դեպքը մի անգամ է պատահում: Այս բոլոր իրողությունները միատեղվելով նպաստեցին, որ ավելի ու ավելի հաճախ լսենք երթուղային վթարների մասին, որոնց մի մասը, ցավոք, ավարտվում է ողբերգությամբ: Վթարների համար բարենպաստ գործոններ են նաեւ լուսակիրները: Հենց պետավտոտեսուչների վկայությամբ, շուրջ 2 հազար լուսակիրներ եղածից պակաս են Երեւանում: Սակայն շատ փողոցներում դրանք շատ ավելի են, քան անհրաժեշտ է, եւ մեր վարորդները մեքենան ճիշտ վարելու համար հաճախ ստիպված են աղավնել բնազդին:

Սա պրոբլեմի մի երեսն է, մյուս երեսին նաեւ դաժան շահագործման ենթարկվող վարորդն է: Աշխատելով լարված, երկարաձգված աշխատանքային ժամանակով, նա դեռ ստիպված է մտածել գծի տիրոջն ու պետավտոտեսուչին կաշառք տալու մասին: Եվ ակամա գնալ անթույլատրելի արարքի՝ գերբեռնելով երթուղայինը, վտանգելով թե՛ իր, թե՛ ուղեւորների կյանքը: Նրանց աշխատանքային իրավունքները պաշտպանող ոչ մի կազմակերպություն չկա, արհմիությունները վաղուց կիսակենդան գոյություն են քարշ տալիս:

Ի դեպ, հասարակական 5-6 կազմակերպություններ, որոնց թվում է նաեւ «Միլլեսը», յուրօրինակ կոալիցիա են ստեղծել, որը շաբաթվա սկզբին հանդես կգա պաշտոնական հայտարարությամբ՝ ճանապարհային երթեւեկի անվտանգության խնդիրների շուրջ: Նրանք իրավասու այյաններին կներկայացնեն առաջարկներ ու նախագծեր, որոնք, իրենց կարծիքով, կարող են օգնել տրանսպորտային իրականության մեջ եթե ոչ այսօր, գոնե վաղը կարգ ու կանոն հաստատելուն:

ԿԱՐԻՆԵ ՁԱՌՅԱՆ



Դատավոր Սամվել Ուզունյանը հեռացավ խորհրդակցական սենյակ

Սկիզբը էջ 1

Դատավոր Սամվել Ուզունյանը, ասվածները վերջին խոսքի հետ կապ չունենալու պատճառաբանությամբ նշեց, թե ամենացավալին այն է, որ դատավորն ամբաստանյալին օրենքով չի կարող ընդհատել, իսկ դատավարության մասնակիցներն անգամ ռեպլիկի իրավունք չունեն: Սակայն դատավոր Ուզունյանը նկատեց, որ Հունանյանը փաստաբանները խեղաթյուրված է ներկայացնում, ուստի առաջարկեց խոսել ըստ էության, խոսել միայն դատաքննությամբ ներկայացված նյութերի շուրջ:

Չնայած դատավորի դիտողությանը, ամբաստանյալ Նաիրի Հունանյանը շարունակեց «իր վերջին խոսքը»: Նա նշեց, որ ասելիքներ ունի անգամ կազմակերպիչների գործի անջատված մասով: Նրան թույլ չտրվեց արտահայտվել, թեեւ ենթադրելի էր, որ խոսքը պիտի վերաբերեր հենց անջատված մասով Հունանյանի հարցաքննություններին: Ինչեւէ, Սամվել Ուզունյանը կրկին ընդմիջելով նշեց, որ անջատված մասի կապակցությամբ Հունանյանը կարող է ցուցմունք տալ հենց հարցաքննությունների ժամանակ: Ուզունյանը նաեւ նախազգուշացրեց, որ եթե ամբաստանյալի խոսքը կապ չունենա գործի հանգամանքների հետ, ապա դատավորը կընդհատի նրան:

Ուզունյանը նշեց, որ վերջին խոսքը բացառիկ իրավունք չէ: Այն պետք է լինի իրավական շրջանակներում: Դատավորն ավելացրեց նաեւ, որ, ի տարբերություն Հունանյանի, մյուս ամբաստանյալներն իրենց վերջին խոսքի ենթադրվող բովանդակությունը ճիշտ են հասկացել:

Հունանյանը հայտնեց, որ հրապարակելու է նամակներ, դիմումներ, որոնք ուղղել է հանրապետության նախագահին, գլխավոր դատախազությանը պարզելու, թե ինչո՞ւ 2003-ի հունվարից մինչեւ հուլիս դատավարությունը 6 ամսով ընդհատվեց: Ըստ այդմ, Հունանյանը կասկածներ է ունեցել, թե դատավարության ընդհատումն օրինական պատճառներ չունի: Եթե հրապարակի իր ասած փաստաթղթերը, ապա, ըստ իրեն, Հունանյանը կապացուցի, որ դատարանը եւ մեղադրող կողմը, ընդմիջելով դատավարությունը, գտնվել են թելադրանքի ազդեցության տակ: Հունանյանը նշեց նաեւ, որ իր հրապարակելիք նյութերը կնպաստեն գործում նոր հանգամանքների բացահայտմանը:

Սամվել Ուզունյանը թույլ չտվեց հրապարակել այդ նյութերը՝ նշելով, որ դրանք դատարանում չապացուցված փաստաթղթեր են, եւ Հունանյանն իրավունք չունի դրանք հրապարակելու: Հայտարարվեց ընդմիջում, որից հետո Հունանյանը շարունակեց նույն ոգով եւ ըստ էության համբերությունից հանեց դատավորին: Դատավոր Սամվել Ուզունյանը հայտարարեց, որ եթե ինչ-ինչ փաստաթղթերից խոսելով Հունանյանը մտածում է, թե կարող է կոտրել Սամվել Ուզունյանին, ապա դա չի ստացվի: «Ես ահաբեկչական գործ քննող դատավոր եմ եւ չեմ հանդուրժի ահաբեկչություն դատարանում», ասաց Ս. Ուզունյանը եւ ավելացրեց, որ ամբաստանյալի խոսքի ընդհատումները նրա իրավունքների ոտնահարում չեն: Ընդհակառակը՝ դատավարության ընթացքում Սամվել Ուզունյանին քանիցս մեղադրել են Հունանյանի իրավունքները չափից ավելի պատշաճելու մեջ:

Ինչեւէ, թերեւս անընդունակ լսելու դատավորի խոսքերը, Հունանյանը շարունակեց, թե վերջին խոսքի բովանդակությունը սահմանված չէ, ուստի եւ անդրադարձավ, ըստ իրեն, գործում եղած անօրինականություններին:

Սա վերջին կաթիլն էր, որ բերնեբերան լցրեց Սամվել Ուզունյանի համբերության բաժակը: Դատավորն աղօրինությունների մասին ամբաստանյալի ասելիքները հասցեագրելով գլխավոր դատախազությանը, հայտարարեց, որ դատարանը համբերությամբ 3 օր լսել է Հունանյանի ճառը: Այնուհետեւ Սամվել Ուզունյանը Նաիրի Հունանյանի վերջին խոսքը հայտարարեց ավարտված եւ հեռացավ խորհրդակցական սենյակ:

Հ. Գ. Երեկ թերեւս ավարտվեց նաեւ լրատվամիջոցների տանջանքը՝ խրոնիկ դարձած այս դատավարությունը լուսաբանելու առումով: Հուսանք եւ ցանկանանք, որ նման իրավիճակներ երբեւէ չկրկնվեն:

ԿՈՐՅՈՒՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԿԻՊՐՈՍ

Մելգոնյանը վտանգված է

Տարածքի համար առաջարկվում է 40 միլիոն փաունդ

«Սայփրս մեյլ» կիպրական թերթում ժան Քրիստուն գրում է.

Հայկական համայնքը արագ միջոցներ է ձեռնարկում փրկելու վաստակոտ վիճակում հայտնված Մելգոնյան վարժարանը փակվելու վտանգից: Գործարարները 40 միլիոն կիպրական փաունդ (շուրջ 70 մլն դոլար) են գնահատել մայրաքաղաքի կենտրոնում գտնվող վարժարանի տարածքը:

Վարժարանը, կառուցված 1926 թվին, մոտ 80 տարի եղել է հայկական մշակույթի կենտրոն: Այժմ դրա աղագան կասկածի տակ է դրված, քանի որ Ամերիկայում տեղակայված կառավարիչ վարչությունը մտածում է շենքը վաճառելու կամ այլ վայր տեղափոխելու մասին:

Կիպրոսի խորհրդարանի Ներկայացուցիչների պալատի անդամ Պետրոս Գալայճյանը «Սայփրս մեյլ» թերթին ասաց, որ ամբողջ համայնքն է ոտի կանգնած նման հեռանկարի դեմ: Նա հայտնեց, որ Փարիզ է թռչելու այս շաբաթավերջին՝ հանդիպելու վարչության կառավարիչ նախագահին ու փոխնախագահին՝ համոզելու համար, որ հետ կանգնեն իրենց մտադրությունից:

Հայկական համայնքը միեւնույն ժամանակ դիմում է Կիպրոսի կառավարությանը՝ օգնելու վարժարանին լրավճարներ հատկացնելով՝ փակելու համար բյուջեի պակասորդը: Նախատեսված է Գալայճյանի հանդիպումը կրթության նախարարի հետ:

Ըստ Գալայճյանի, դպրոցի փակման վերաբերյալ ասեկոսեներն արդեն որոշ ժամանակ շրջում են երկրով մեկ այն բանից հետո, երբ ՀԲԸՄ-ի կառավարիչ վարչության անդամներից մեկը կոգի այցելելով զեկույց է պատրաստել վարժարանի աղագայի վերաբերյալ: ՀԲԸՄ-ն խանից ավելի դպրոցներ է հովանավորում ամբողջ աշխարհով մեկ:

«Մելգոնյանը պատկանում է ՀԲԸՄ-ի Նյու Յորքի գլխավոր գրասենյակին», բացատրեց Գալայճյանը, ավելացնելով, որ վարժարանի վայրը խիստ նպաստավոր է ֆինանսական գործարքի համար: «Դպրոցների մեծամասնությունը շահույթով չի աշխատում, եւ վարչությունը մտածում է, թե ինչ անի դրանց հետ: Ճիշտ է, դեռ որոշում չի ընդունել, բայց հենց ասեկոսեները սկսվում են, խուճապը ծայր է տալիս», ասաց Գալայճյանը: Նա նշեց, որ անորոշությունն արդեն իսկ ազդել է ընդունվողների թվաքանակի վրա՝ 240-ից նվազելով 210-ի: Աշակերտներից 60-ն են միայն Կիպրոսից: Մյուսները Հունաստանից, Լիբանանից, Սիրիայից, Բուլղարիայից, Ռումինիայից, Ալբանիայից, Կանադայից եւ Մ. Նահանգներից են:

«Կա նաեւ վարժարանն այլ վայր տեղափոխելու գաղափարը, որին կառավարությունը տեղյակ է: Մենք զրուցել ենք նրանց հետ եւ հանդիպելու ենք հաջորդ շաբաթ լրացուցիչ դրամական հատկացումների միջոցով հարցը լուծելու նպատակով: Կառավարությունը լավ է տրամադրված», ասաց Գալայճյանը, շեշտելով, որ Կիպրոսի 3000-ի հասնող հայկական համայնքը, ինչպես նաեւ սփյուռքի այլ համայնքներ դեմ են Մելգոնյանի տեղափոխմանը կամ, առավել եւս, վաճառելուն: Նա հույս հայտնեց, որ Փարիզից որոշակի, կոնկրետ լուրերով կվերադառնա: «Նրանք չափազանց աղոտ են այդ մասին արտահայտվում, բայց նշել են որ կարող են տեղափոխել վարժարանը Կիպրոսի մի այլ վայր կամ նույնիսկ մի այլ երկիր», ասաց նա «ողբերգական» համարելով հայ համայնքի համար դրա կորուստը:

«Մենք այդ մասին չենք էլ ուզում մտածել: Հնարավոր չէ ընդունել նման որոշում: Եկեք ընդունենք, որ Մելգոնյանը խորհրդանշական իմաստ ունի: Դա պատմական վայր է: Մենք չենք կարող թույլ տալ դրա վաճառը կամ տեղափոխությունը: Ամեն ինչ այս համայնքում դրա շուրջն է պտտվում՝ ձեռնարկումներ, հանգանակություններ, թատերական ներկայացումներ, ամեն ինչ», եզրակացրեց նա, հույս հայտնելով, որ «վերջ կդրվի այդ ամբողջ անհեթեթությանը»:

Հ. Ծ.

Ռուսաստանի հայությունը դառնում է սփյուռք

Առաջիկա կիրակի Ռուսաստանի Սամարա քաղաքում Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի թեմի առաջնորդ Եզրաս սրբազանի ծեռքով կբացվի հայկական Սուրբ Խաչ եկեղեցին: Այն կառուցված է Սամարայի հայ համայնքի ղեկավար, գործարար Արթուր Մարտիրոսյանի շնորհիվ: Այդ մարզում ավելի քան 120 հազար հայ է ապրում, որոնք այստեղ հաստատվել են տարբեր ժամանակներում: Նրանցից շատերը միամտորեն կարծում են, թե «եկեղեցին կառուցում են Հայաստանը, Քոչարյանը»: Բայց նրանք երեւի շատ կզարմանային, իմանալով, որ ոչ ոքմական հայրենիքը կապ չունի իրենց նոր հայրենիքում հայապահպանության նոր օջախի հայտնվելու հետ:

Սամարայում (ի դեպ, այստեղ կառուցված է Ցեղասպանության եւ երկրաշարժի զոհերի հուշարձան), ինչպես ռուսաստանյան այլ քաղաքներում, տաճարի հայտնվելը վկայում է, որ ԽՍՀՄ փլուզումից գրեթե 15 տարի անց Ռուսաստանում ապրող հայերն արդեն ոչ միայն սկսել են իրենց իբրեւ սփյուռք գիտակցել, այլեւ կառույցներ ստեղծել եւ իրենց բնակության նոր վայրերում կառուցել ազգային ինքնօրինակության պահպանման օջախներ ու կենտրոններ, դրանով իսկ կրկնելով Ցեղասպանության հետեւանքով աշխարհի տարբեր մասերում սփռված արեւմտահայերի ուղին:

Մայր հայրենիքը կներկայացնեն այդ տարածաշրջանում ՀՀ պատվավոր հյուպատոսը եւ Մոսկվայում Հայաստանի դեսպանության աշխատակիցներից մեկը: Եկեղեցու եւ հուշարձանի անմիջական բացմանը նվիրված միջոցառումներին մասնակցելուց բացի, հայ պաշտոնական անձինք նաեւ կհանդիպեն տեղական վարչակազմի ներկայացուցիչների հետ: Վերջերս ՀՀ դեսպանությունը բավական ակտիվ է աշխատում Ռուսաստանի տարբեր տարածաշրջանների հետ: Եվ նման ուշադրությունը շատ արժեքավոր է տարածաշրջաններում ապրող հայերի համար: Հիմա չենք գրի այն դժվարությունների մասին, որոնց բախվում են մեր հայրենակիցները նոր վայրերում: Բայց Հայաստանի իշխանությունների փոխարեն, որոնք առայժմ, ցավոք, անկարող են Հայաստանում հայերի աշխատանքի ու բնակության պայմաններ ստեղծել, ես նվազագույն հնարավորությունն անգամ կօգտագործեի ցուցադրելու իմ հարգալից վերաբերմունքն արտագնա աշխատողների հանդեպ, որոնց շնորհիվ այսօր գոյատեւում է երկրի բնակչության կեսը, եւ երախտապարտ վերաբերմունքը նրանց (տվյալ դեպքում՝ տեղական իշխանությունների) նկատմամբ, ում բարեհաճության պայմաններում դա հնարավոր է դառնում: Մանավանդ որ անցած տարիներին ոչխի կանգնած սփյուռքի ներկայացուցիչներն արդեն կարող են դրա համար առիթներ ստեղծել:

Շատ ափսոս, որ վերոհիշյալ արարողությունն իրենց ներկայությամբ չեն հարգելու ՀՀ գործադիր եւ օրենսդիր իշխանության հրավիրյալ ներկայացուցիչները: Զարմանում եմ, որ ՀՀ իշխանությունների աշխարհիկ ներկայացուցիչները չեն եկել: Մանավանդ որ կարելի էր երթեւեկել հայ համայնքի հաշվին:

Ըստ երեւույթին, սփյուռքն անկախության տարիներին շփացրել է նրանց: Նրանց տեսակետից Սամարան գուցե այն մակարդակը չէ, որը կհամապատասխաներ իրենց «ճախրանքին»: Նրանք ժամանակ չունեն. միայն Եվրոպա են գնում, մեկ էլ մայրաքաղաքներ: Ասենք արդեն էլ «այն չէ». եկեղեցու, հուշարձանի բացում... Ուրիշ բան, Մոսկվայում կերուխում լիներ:

Ռուսաստանի տարբեր վայրերում իրական կարիքներ ինչքան ասես կան: Եվ փառք Աստծո, ծարվում են մարդիկ, որոնք այս պայմաններում զբաղվում են տաճարների կառուցմամբ:

ԼՈՒՍԻԿ ՂԱՐԿԱՅԱՆ
Մոսկվա

Կիպրոսում ձախողվում է Թուրքիայի ռազմավարությունը

Կղզու մասնատումը հետզհետե անիրականանալի է դառնում

1974 թ. ամռանը թուրքական զորքերը ներխուժեցին Կիպրոս: 1983 թ. նոյեմբերի 13-ին կղզու գրավյալ հատվածում հռչակվեց «Հյուսիսային Կիպրոսի թուրքական հանրապետությունը»: Այս հանգամանքը միանգամայն համապատասխանում էր Կիպրոսի մասնատման Թուրքիայի ռազմավարությանը: Այլ կերպ՝ թուրքական իշխանությունները մտադիր էին հասնելու կիպրական հիմնահարցի մասնատման տարբերակով լուծմանը, որպեսզի հնարավոր լինի մասնատված հատվածը կցել Թուրքիային:

Կցման համար, սակայն, անհրաժեշտ էր, որ «Հյուսիսային Կիպրոսի թուրքական հանրապետությունը» միջազգայնորեն ճանաչվի: Սակայն թուրքական իշխանությունների գործադրած ջանքերն առ այսօր որեւէ արդյունքի չեն հանգեցրել: Նույնիսկ Ադրբեջանն անարձագանք է թողել վերջիններիս խնդրանքը: Կասկածից վեր է, որ Եվրամիությանը Կիպրոսի Հանրապետության անդամակցությունը Թուրքիային կզրկի նաեւ այդ ջանքերը գործադրելու հնարավորությունից, եւ նա ստիպված կլինի հրաժարվել Կիպրոսը մասնատելու ծրագրերից:

Համենայն դեպս, թուրքական զորքերի ներխուժման հետեւանքով 29 տարի խախտվել են կիպրացիների միասնությունն ու Կիպրոսի տարածային ամբողջականությունը: Այսօր լրանում է «Հյուսիսային Կիպրոսի թուրքական հանրապետության» 20-ամյակը: Թե ինչ ընթացք կունենա կիպրական հարցի կարգավորումը, դժվար է ասել: Բայց որ Կիպրոսի թուրքական հատվածում ինքնակոչ հանրապետության նախագահ Ռաուֆ Դենքթաշի դեմ ուժեղ ընդդիմություն է ձեւավորվել, եւ կիպրացի թուրքերը հույների հետ եվրոպական ընտանիքի մաս են ուզում կազմել, ակնհայտ է:

Ավելին՝ սեպտեմբերի 10-ին, երբ Կիպրոս այցելեց Հունաստանի վարչապետ Յորգոս Պապանդրեուն, Դենքթաշի ընդդիմադիրներն ընդառաջ գնացին՝ հանդիպելով նրան չեզոք գոտում: Հանդիպումը կարեւոր էր այն առումով, որ առաջիկա դեկտեմբերի 14-ին Կիպրոսի թուրքական հատվածում նշանակված են ընտրություններ, որոնք թերեւս կանխորոշելի են ոչ միայն Դենքթաշի եւ «Հյուսիսային Կիպրոսի թուրքական հանրապետության», այլեւ լուրջ ներգործություն են ունենալու Կիպրոսի նկատմամբ Թուրքիայի որդեգրած քաղաքականության եւ նրա ռազմավարության, ինչպես նաեւ ԵՄ-ի հետ հարաբերությունների վրա:

Ինչո՞ւ: Որովհետեւ եվրահանձնաժողովի ամենամյա զեկուցագրում ԵՄ-ը Թուրքիային հորդորել է մինչեւ 2004 թ. մայիսի 1-ը լուծել Կիպրոսի խնդիրը, որպեսզի եվրոպական այդ կառույցին անդամակցելու պահին կղզին մասնատված չլինի: Թուրքական «ենի շաֆաք» թերթը նոյեմբերի 6-ի համարում դրա առնչությամբ գրել էր, որ ԵՄ-ի զեկուցագրի այս ձեւակերպումը պաշտոնական Անկարային խուճապի մատնեց, որովհետեւ Կիպրոսի հիմնահարցը երբեմ զեկուցագրերի տեքստում որպես «պաշտոնական նախապայման» չէր արտացոլվում:

Ըստ երեւույթին, Անկարայի խուճապի մեկ այլ պատճառն էլ եվրահանձնաժողովի հետեւյալ հայտարարությունն է. «Եթե 2004 թ. Կիպրոսի խնդիրը լուծված չլինի, ապա դժվար թե հնարավոր դառնա ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության բանակցությունները»: Հարցը, սակայն, սոսկ բանակցությունները չեն, այլ ԱՄՆ-ի հետ տարածայնությունների պատճառով առաջացած լարվածությունը՝ ԵՄ-ին մերձենալու միջոցով հակակշռելու Անկարայի հավակնությունը: Ուրեմն, Կիպրոսի հիմնահարցը Թուրքիայի համար կարեւոր է նաեւ այդ հավակնությունների առումով:

Այլ կերպ՝ գնդակը թուրքական դաշտում է: Կհաջողվի՞ Թուրքիայի վարչապետ Ռեջեպ Թայիփ Էրդողանին դա փոխադրել հունական դաշտ՝ ցույց կտա նրա Կիպրոսի թուրքական հատված կատարելիք այցը, որը տեղի է ունենում այսօր: Թեեւ Էրդողանը, ըստ «Յուրիեթի», հայտարարում է, թե այցը «Հյուսիսային Կիպրոսի թուրքական հանրապետության» 20-ամյակի հանդիսություններին մասնակցելու նպատակ է հետապնդում, բայց եւ այնպես դժվար չէր կռահել, որ նա դրանով դեկտեմբերի 14-ի ընտրությունների նախօրյակին մի անգամ եւս Դենքթաշին կհավաստի Թուրքիայի աջակցությունը, միաժամանակ դրական ազդանշաններ կհաղորդի հունական կողմին:

Բայց ինչ էլ որ անի, միեւնույն է, Կիպրոսում օղակը հետզհետե սեղմվում է, ինչ վերաբերում է թուրքական հատվածում հետզհետե հզորացող ընդդիմությանը, ապա նա Դենքթաշին Էրդողանի աջակցությունը կարող է որպես մարտահրավեր ընդունել: Այդ դեպքում առաջիկա ընտրություններում Դենքթաշի պարտությունը կդառնա անխուսափելի: Մինչդեռ Դենքթաշը Անկարայի դրածոն է: Սա նշանակում է, որ նրա պարտությունը համազոր կլինի Թուրքիայի պարտությանը:

ՀԱԿՈԲ ՉԱՔՐՅԱՆ

ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐ

«Ալ Ղաիդան» ԱՄՆ-ի դեմ նախապատրաստում է խոշոր ահաբեկչություն

«Ալ Ղաիդա» միջազգային ահաբեկչական կազմակերպությունն ԱՄՆ-ի դեմ նախապատրաստում է նոր, խոշոր ահաբեկչություն, որի հետեւանքով հնարավոր է մինչեւ 100 հազար զոհ: Այդ մասին «Ալ Ղալ» իսլամական ինտերնետային սայթում հրապարակված հարցազրույցում հայտարարել է «Ալ Ղաիդայի» առաջնորդ Ուսամա բեն Լադենի օգնականներից մեկը՝ Աբու Սալմա ալ Հիջազին:

Ալ Հիջազիի խոսքերով, ահաբեկչությունը կարող է իրականացվել մոտ ժամանակներս, հավանաբար՝ մինչեւ մահմեդականների սրբազան ամիս ռամադանի ավարտը: Հարցազրույցում ալ Հիջազին նաեւ հայտարարել է, որ «Ալ Ղաիդան» է պատասխանատվություն կրում նոյեմբերի 9-ին Սաուդյան Արաբիայի մայրաքաղաք Ռիադում կատարված ահաբեկչությունների համար: Նա պնդում է, թե այդ օրը պայթեցումներից սպանվել են 40 ամերիկացիներ եւ լիբանանցի 27 քրիստոնյաներ, որոնք Լիբանանում խոշտանգել էին մահմեդականների: Մինչդեռ ավելի վաղ հրապարակված պաշտոնական տվյալների համաձայն, նոյեմբերի 9-ին ահաբեկչություններից զոհվել է 18 մարդ եւ զոհված լիբանանցիներից մի մասն էլ մահմեդական է:

Ալ Հիջազին խոստացել է, որ էր Ռիադի ահաբեկչությունների համար «Ալ Ղաիդայի» պատասխանատվության մասին մոտ ժամանակներս կհայտարարի Սաուդյան Արաբիայում որոնվող մահմեդական հոգեւոր առաջնորդներից մեկը: Ռամադանի ավարտից հետո հրապարակվելու են նոյեմբերի 9-ի մահապարտ ահաբեկիչների կտակները:

Փոթորկից ԱՄՆ-ում հոսանքից զրկվել է 1,4 մլն մարդ

ԱՄՆ-ի միջին արեւմուտքի եւ արեւելքի շրջաններով երեկ անցած փոթորիկը մեծ վնասներ է պատճառել: Ասոշիեյթեդ պրես գործակալությունը հաղորդում է, որ սաստիկ քամու հետեւանքով զոհվել է երկու մարդ: Նյու Յորքում ծառը տապալվելով սպանել է մի կնոջ, իսկ Վիրջինիայի նահանգի արեւմուտքում մի տղամարդ իր ավտոմեքենայով հայտնվել է գետի հորդացած ջրերում եւ չի փրկվել:

Մի քանի անձինք վիրավորվել են ծառերի եւ հեռագրասյուների անկումից: Նյու Ջերսիում բռնկած հրդեհը ոչնչացրել է մի շենք՝ անօթեւան թողնելով 80 բնակիչների: Տարերային աղետը խցանումներ է առաջացրել մասնավորապես Դետրոյթի շրջանում:

ԱՄՆ արեւելյան ափի որոշ քաղաքների օդանավակայաններում չվերթերը հետաձգվել են, խախտվել է երկաթուղային հաղորդակցությունը Նյու Յորքի եւ Վաշինգտոնի միջեւ: Տուժած շրջանների դպրոցներում պարապմունքները մասամբ չեղյալ են հայտարարվել: Սաստիկ քամուց Վաշինգտոնի էլեկտրակայաններից մեկում հրդեհ է ծագել:

Ամենից շատ տուժել են Միչիգանի եւ Օհայոյի նահանգները, նվազ չափով՝ Դելավերի, Իլինոյսի, Մերիլենդի, Նյու Ջերսիի, Նյու Յորքի, Փենսիլվանիայի եւ Արեւմտյան Վիրջինիայի նահանգները: Երկրում հոսանքից զրկվել է 1,4 մլն մարդ: Մեծ լճերի վրա 110 կմ/ժամ արագությամբ քամիները խախտել են նավարկությունը: Էրի եւ Օնտարիո լճերի ալիքների բարձրությունն անցել է 5 մետրից:

Մարսի վրա գետեր եւ լճեր են եղել

Մարսի մակերեւույթի նոր լուսանկարները վկայում են, որ 1 մլրդ տարի առաջ այնտեղ, հավանաբար, ջրառատ գետեր եւ լճեր են եղել: Mars Global Surveyor միջմոլորակային կայանի կատարած լուսանկարները երեկ հրապարակվել են ամերիկյան NASA տիեզերական գործակալության սայթում:

Լուսանկարված տեղամասերը շատ նման են գետաբերանի՝ գետաբազուկներով եւ վտակներով: Մասնագետների կարծիքով, նման հետքեր կարող էր թողնել միայն ջրի ուժեղ եւ տեւական հոսանքը, որը լճի մեջ է թափվել մոտ 1 մլրդ տարի առաջ: Մարսի հարավային կիսագնդում հայտնաբերված գետաբերանի երկարությունը 13 կմ է, լայնությունը՝ 11 կմ:

Ներկայումս Մարսի վրա ջրի լինել-չլինելու հարցը հստակ պատասխան չունի, նշում է ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ը: Ենթադրվում է, որ ջերմաստիճանի եւ մթնոլորտային ճնշման անկման հետեւանքով մոլորակի ջուրը վերածվել է սառցի կամ գոլորշացել է:

«Լուսանկարներն ապացուցում են, որ մենք ճիշտ ճանապարհի վրա ենք: Մոտ ժամանակներս կշարունակենք մոլորակի վրա որոնել այն վայրերը, որտեղ եղել է ջուր, թերեւս՝ նաեւ կյանք: Ապագայում այդ տեղամասերը որպես վայրէջքահարթակներ կօգտագործենք տիեզերանավերի, օրինակ՝ 2009 թ. մեկնարկելիք Mars Science Laboratory-ի համար», ասում է NASA-ի առաջատար մասնագետ Ջիմ Գարվինը:

ՀԱՅՈՐԴ ՇԱԲԱԹ՝ ՀԵՌՈՒՍՏԱԷԿՐԱՆՆԵՐԻՆ

ԱՐԺԵ ԴԻՏԵԼ

18 Նոյեմբերի, 02.35 Հայ TV

■ **«12 կապիկ»★**: Ռեժիսոր՝ Թերի Գիլիամ: Դերերում. Բրուս Ուիլիս, Բրեդ Փիթ, Մադլեն Սթոու: ԱՄՆ, 1995:

Ֆուտուրիստական թրիլեր:

19 Նոյեմբերի, 24.00 Պրոմեթեւս

■ **«Սերը շուն է»★★**: Ռեժիսոր՝ Ալեխանդրո Գոնսալես Ինյարիտու: Դերերում. Էմիլիո Էչեւարիա, Գաել Գարսիա Բեռնալ, Գոյա Տոլեդո: Մեխիկա, 2000:

Դժբախտ սիրո նովելների հավաքածու, որն արժանացել է մի շարք փառատոնային մրցանակների:

20 Նոյեմբերի 22.05 Հ1

■ **«Չկնոր արքան»★★**: Ռեժիսոր՝ Թերի Գիլիամ: Դերերում. Ռոբին Ուիլյամս, Ջեֆ Բրիջես, Ամանդա Փլամեր: ԱՄՆ, 1991:

Դոնկիխոտյան վարիացիա՝ ժամանակակից Նյու Յորքի ֆոնին:

21 Նոյեմբերի, 22.50 Շողակաթ

■ **«Հայելի»★★★**: Ռեժիսոր՝ Անդրեյ Տարկովսկի: Դերերում. Մարգարիտա Տերեխովա, Օլեգ Յանկովսկի, Անատոլի Սոլոնիցին: ԽՍՀՄ, 1974:

«Հոգու բնաղատկեր»՝ սյուրռեալիզմի կինոով:

21 Նոյեմբերի, 00.55 Երեւան

■ **«Իմ գաղտնիքի ծաղիկը»★★★**: Ռեժիսոր՝ Պեդրո Ալմոդովար: Դերերում. Մարիսա Պարեդես, Չուս Լամարեվե, Խոակին Կորտես, Ռոսսսի Դե Պալմա: Իսպանիա - Ֆրանսիա, 1995:

Վիոլասանուհի Լեոն հայտնվում է նյարդային խանգարման եզրին:

22 Նոյեմբերի, 00.30 Հ1

■ **«Գիշերային բարապանը»★★★**: Ռեժիսոր՝ Լիլիանա Կավանի: Դերերում. Դիրք Բոգարդ, Շարլոթ Ռեմպլինգ: Իտալիա, 1974:

Համակենտրոնացման ճամբարի նախկին սիրեցյալները՝ զոհն ու դահիճը, տարիներ անց վերստին հանդիպում են:

23 Նոյեմբերի, 01.30 Շանթ

■ **«Սպանություն Արեւելյան ճեղքնթացում»★**: Ռեժիսոր՝ Սիդնի Լյումեթ: Դերերում. Ալբերտ Ֆինի, Լորեն Բեքոլ, Ինգրիդ Բերգման, Շոն Քոների, Վանեսա Ռեդգրեյվ, Մայքլ Յորք: Մեծ Բրիտանիա - ԱՄՆ, 1974:

Ագաթա Քրիստիի համանուն դետեկտիվի էկրանացումն է:

ԼՈՒԻՍ ԲՈՒՆՅՈՒԵԼ

ԻՄ ՎԵՐՋԻՆ ՇՈՒՆՉԸ

Այս տարի լրացավ կինոյի մեծերից մեկի՝ Լուիս Բունյուելի մահվան 20-ամյակը: 1982-ին, իսպանացի ռեժիսորի մահից ամիսներ առաջ Փարիզի «Ռոբեր Լաֆոն» հրատարակչությունը լույս ընծայեց նրա «Իմ վերջին շունչը» հուշերի գիրքը, որից մի հատված ներկայացնում ենք ստորեւ:

Ես վաղուց եմ վարժվել մեռնելու մտքին: Դեռ այն ժամանակ, երբ մենք Ջասկի շաբաթը Կալանդայի փողոցներով կմախքներ էինք տանում, մահը դարձել է իմ կյանքի բաղկացուցիչ մասը: Բայց ի՞նչ կարող է ասել մահվան մասին ինձ նման ծեր աթեիստը: Մեկ-մեկ ես, այնուամենայնիվ, ինձ հարց եմ տալիս, թե ինչ է այդ մահը: Ի սեր զվարճանքի՝ մտորում եմ դժոխքի մասին: Հայտնի է, որ բոցերն ու խանձողները այնտեղ բացակայում են, եւ դժոխքը, ժամանակակից ասվածաբանների տեսակետից, պարզապես մի վայր է, ուր մարդուն զրկում են աստվածային լույսից:

Եվ ահա, ես տեսնում եմ հավիտենական մշուշի մեջ լողացող մարմինս՝ իր բոլոր հյուսվածքներով, որոնք ինձ անհրաժեշտ են վերջնական հարության համար: Հանկարծ դիմչում եմ ուրիշ մարմնի՝ մի սիամացու, որը մեռել է երկու հազար տարի առաջ՝ վայր ընկնելով կոկոսյան արմավենուց: Նա հեռանում է մշուշի մեջ: Անցնում են եւս միլիոնավոր տարիներ, եւ ես հանկարծ նորից եմ բախվում ինչ-որ մեկին: Պարզվում է, որ նա էլ Նապոլեոնի բանակի պարենավաճառուհին է: Եվ այստեղ՝ շարունակ: Ես խարխափում եմ այդ նոր դժոխքի ահավոր խավարում, իսկ հետո՝ վերադառնում երկիր, որտեղ դեռ ապրում եմ:

Իմ վերջին շունչը նախազգալով՝ մտածում եմ, թե ինչ եզրափակիչ կատակ հորինեմ: Կանչում եմ հին բարեկամներիս՝ ինձ նման համառ աթեիստների: Նրանք տխուր-տրտում նստում են անկողնուս շուրջ: Գալիս է քահանան: Ի մեծ վրդովմունք իմ ընկերների՝ ես խոստովանում եմ մեղքերս, թողություն խնդրում՝ եւ վերջին օծումն ընդունում: Հետո շրջվում եմ կողքի եւ մեռնում: Բայց չգիտեմ՝ ուժ կունենա՞մ կատակելու այդքիսի դահի:

Մի բանի համար եմ տխրում. ես չեմ իմանա, թե ինչ կկատարվի մեր աշխարհում ինձնից հետո. չէ՞ որ աշխարհը շարժման դահին եմ թողնում, ասես վեթի ընթերցանության կեսին, մի վեթ, որի շարունակությունը դեռ չի հրատարակվել: Մի բան էլ խոստովանեմ. հակառակ թերթերի հանդեպ իմ ողջ ատելությանը՝ ես կուզենայի ամեն տասը տարին մեկ վեր կենալ գերեզմանից, մոտենալ թերթերի կրպակին եւ ինչ-որ հրատարակության թարմ համար գնել: Ավելին չեմ խնդրում: Թերթը թեւատակիս, գունատ, պատերին դիմչելով, կվերադառնայի գերեզմանատուն եւ կկարդայի այնտեղ աշխարհի աղետների մասին, իսկ հետո, խաղաղված, նորից կննջեի շիրմաքարիս հովանու տակ:

Մեխիկացի նշանավոր գրող Կառլոս Ֆուենտեսը Բունյուելի բազմաժյա բարեկամն է եղել, մանավանդ որ, հանգամանքների բերումով, Բունյուելը երկար տարիներ ապրում էր Մեխիկայում: Ֆուենտեսի հուշերը, որ հատվածաբար բերված են այստեղ, հրատարակվել են «Կամբիո-16» իսպանական շաբաթաթերթում:

ԿԱՌԼՈՍ ՖՈՒԵՆՏԵՍ

ԻՄ ԸՆԿԵՐ ԲՈՒՆՅՈՒԵԼԸ

1983-ին 83 տարեկանում վախճանվեց իմ ընկեր Լուիս Բունյուելը: Նա բոլոր ժամանակների իսպանական մշակույթի խոշորագույն դեմքերից մեկն էր: Բայց ամենից առաջ՝ հիանալի ընկեր էր, որի բացակայությունն ավելի ու ավելի սուր եմ զգում:

Մեխիկոյում, սովորաբար, նրան այցելում էի շաբաթավերջին՝ այն ճշտությամբ, որ ինքն էր պահանջում ինձնից, եւ հեռանում էի երեկոյան ութին 7-ին: Բունյուելը վանականի սովորություններ ուներ: Նա պառկում էր ճնելու երեկոյան 9-ին, իսկ առավոտյան 6-ին արդեն ոտքի վրա էր: Մեխիկոյի Ֆելիխ Կուենյա փողոցի իր տանը նա ապրում էր աղյուսե բարձր պարսպի հետեւում: Իսկ հյուրերին ընդունում էր բարում, որը զարդարված էր պարզապես փարիզյան մետրոյի սխեմայով:

Բունյուելի զույցն ավելի էր արբեցնում, քան իր գինու կոկթեյլները: Նրա կյանքում լիովին արտացոլվել է մեր ժամանակի արվեստագետի կյանքը: Բունյուելն այնքան էլ տարված չէր վերացարկումներով: Բայց հիասքանչ միջադեպերով ու հուշերով հագեցված նրա պատմությունները անքննելի էին այն փիլիսոփայական երանգից, որտեղ հումորի տակ հիասթափություն էր պահված, իսկ ցասումն իր մեջ հանդերություն էր բաժնում: Ես երբեմ ակնարկել չեմ եղել, որ սթափ դատողությունը դավաճանի նրան: Արտեղծած, թե ուրախ, տխուր, թե հանդերձար՝ Բունյուելը միշտ խելոք էր: Եվ ահա, մահվան շունչը դիմավ նրան:

Ծերացած Բունյուելը միշտ ասում էր ինձ. «Երիտասարդությունը ոչ կորչում է, ոչ էլ պահպանվում: Դա այն է, ինչ մենք այլեւս ձեռք չենք բերում»: Նա երբեմ հանդիպ չէր բանաստեղծ Ռոբերտ Բրաունինգի մտքին. «Ծերացիր ինձ հետ: Դա լավագույնն է, որ մնում է կյանքում»:

Ջերմ սերը անցյալի մշակույթի եւ դրա ներկայացուցիչների հանդեպ, նրա արտի բանկ հիշողությունները (պետք էր լսել, թե ինչպես էր Բունյուելը պատմում Կեւեդոյի, Սերվանտեսի, Գոյայի, Գոնգորայի սյուռեալիստների, Սարագոսայում անցած մանկության տարիների, ծննդավայր Կալանդայի, ընկերների մասին) կյանքի վերջում նրա համար իսկական արժեք էին դարձել: Ի՞նչ շատ բան էր տեսել նա, կարդացել, ինչե՞ր էին գլխով անցել, ինչպե՞ս էր սիրում, վայելում կյանքը:

Բունյուելի կատակները առակի կարգն էին անցել: Դրանցից լավագույնները նա վերապատմել է իր հուշերի գրքում: Իսկ ես ուզում եմ հիշել նրան բնորոշ կատակներից մեկը: 60-ականների կեսին էր, մենք միասին գնացինք Բունյուելի տան մոտակայքում գտնվող «Ինտերնասիոնալ» կինոթատրոն՝ Նիքոլաս Ռեյի «Արքայից արքան» դիտելու, որտեղ Հիսուս Քրիստոսի դերը խաղում էր Ֆիլմի էկրան բարձրանալուց հետո բավական վաղ մահացած Տեֆրի Հանթերը:

Կինոնկարի դրվագներից մեկում սաստկանում փորձության է ենթարկում Քրիստոսին անապատում: Չար ոգին Հիսուսին առաջարկում է ավազների մեջ ոսկեզօծ գնդեթներով շողարձակող մի տեսիլ քաղաք: Բունյուելը, անվրդով հետեւելով տեսարանին, հանկարծ բացականչեց. «Գրողը տանի, ավելի լավ էր Դիսնեյլենդն առաջարկեր»: Նա այդ խոսքերը բարձր արտասանեց՝ խախտելով դահլիճում տիրող հարգալից լռությունը: Ինչ-որ մեկը մեզ վրա մուգաանո շրջեց՝ մեխիկական քաղցրավենիքի մի տեսակ, որ ծեւով նման է կարամելի նռան եւ վաճառվում է կինոթատրոններում: Սուլոցների, ծաղրալի ռեպլիկների, լռություն պահանջող ճիչերի, հայհոյանքների տարափի տակ մենք դուրս փախանք կինոթատրոնից:

Բայց Բունյուելին հաջածանոթ էր ոչ միայն հումորի զգացումը, այլեւ զայրույթը: Մի անգամ, 60-ականների վերջին, երբ նա Ֆրանսիայում նկարահանում էր «Ծիրկաթին» ֆիլմը, հունվարյան ցուրտ օրերից մի օր միասին գնացինք Դանֆյոր-Ռոշերոյի կողմերը ճաշելու: Դուրս գալով բիստրոյից՝ քայլեցինք պողոտայով: Հանկարծ մի վերականգնվող շենքից հետ քաշվեց կարմրահեր ու կարմրայտ մի քարաշ՝ «ժիտան» սիգարետը ատամների արանքում եւ սոիտակ ներկի ամանը ձեռքին: Նա թեթեւակի խվեց Լուիսին եւ ներկով կեղտոտեց վերարկուն:

- Այլիդ առաջ նայիր,- գոչեց քարաշը:

- Դա ձեզ է վերաբերում,- պատասխանեց Բունյուելը:

- Հա՞,- բացականչեց ֆրանսիացին՝ ոտալով Բունյուելի իսպանական առոգանությունը,- խոզ, ուրեմն այլազգի ես:

Բունյուելը ոտնձեց քարաշի մոտ, բռնեց ծնոտն ու ասաց. «Այստեղ ես ապրել եմ ու աշխատել: Այստեղ եմ ամուսնացել, եւ որդիս այստեղ է ծնվել: Ես ձեզ նման ֆրանսիացի եմ, որովհետեւ Ֆրանսիային այնքան բան եմ տվել, ինչքան նա՝ ինձ: Ձեր բշնամանքը օտարերկրացիների հանդեպ նողկալի է, իսկ դուք՝ զզվելի տիպ, իսկական շան որդի: Ես կուզեի, որ ինձ խփեիք, իսկ ես ձեզ մենամարտի կկանչեի: Թեեւ դուք չեք անի դա, քանի որ կծծի բշվառական եք ու շատ լավ գիտեք, որ նա, ով այստեղ առաջինն է խփում, պետք է հազար ֆրանկ տուգանք վճարի»: Քարաշը եփած գազարի գույն առավ, ցլի նման այլերը չոռեց Լուիսի վրա եւ ինչ-որ բան էրթմնջալով՝ գնաց իր գործին: Իսկ Բունյուելը փիլիսոփայաբար նկատեց. «Ֆրանսիական շովինիզմի հետ վարվելու գաղտնիքն այն է, որ ժլատությունը միշտ ավելի ուժեղ է դուրս գալիս, քան ատելությունը օտարերկրացիների նկատմամբ»:

Փարիզում Բունյուելն ապրում էր Ռասպայ բուլվարում, համեստ հյուրանոցային համարում, որի լուսամուտները բացվում էին Մոնպառնասի գերեզմանատան վրա: Մեխիկական կինոյի համար ծանր ժամանակներում նա սովորել էր նկարահանել արագ եւ խնայողաբար: Նկարահանումներն ավարտելով՝ կարող էր երեք օրում մոնտաժել ֆիլմը: Մի անգամ, «Բուրժուազիայի համեստ հմայքը» ֆիլմից հետո ես հանդիպեցի նրան իրեր ճամպրուկում տեղավորելիս: «Ուզում եմ տուն վերադառնալ,- ասաց:- Կարոտում եմ Մեխիկոն: Բայց ամենից շատ վախենում եմ հյուրանոցում մենակ մեռնելուց՝ անավարտ ֆիլմի սցենարը սեղանիս: Ուզում եմ իմանալ, թե ում ձեռքն ընդմիշտ կփակի աչքերս»:

Իմ կարծիքով՝ նա գիտեր, թե դա ով կլինի: Ճակատագրի հեգնանքով, որ հիշեցնում է Պերես Գալդոսի եւ մարիզ դը Սադի հեգնանքը, Լուիսն իր վերջին օրերն անցկացրեց՝ զրուցելով դոմինիկյան ուխտի մեր բարեկամ հայր Խուլիան Պաբլոյի հետ: Երբ Խուլիանին տեսա փողոցում, նա կարողացավ միայն ասել. «Դեռ չեմ տեսել Բունյուելի նման մարդու, որ ոգու այդքիսի արիությամբ մեռնի»: Ես հավատում եմ դրան: «Ծիրկաթին» ֆիլմում մի տեսարան կա, որի մասին Բունյուելն ասում էր, թե ինքնակենսագրական բնույթ ունի: Ոմն ծերունի մեռնում է իջեւանատանը, Սանտիագոյի ծանապարհին: Թախտին պառկած՝ նա ննջում է. «Իմ ատելությունը գիտության ու տեխնոլոգիայի հանդեպ երեւի թե նորից ինձ անհեթեթ հավատ ներշնչի առ Աստված»: Չեմ կարծում, թե Բունյուելին պետք է նման բան պատահեր: Հիանալի գլուխ հանելով հերետիկոսություններից ու պատրիսիկայից՝ եկեղեցու հայրերի երկերից, Բունյուելը կշարունակեր դարել, մինչեւ որ Աստված, ինչպես աղերսում էին նախնիները, ներեր Լուցիֆերին եւ ուղարկեր դրախտ: Բունյուելի բժիշկ Թեոդորո Սեսարմանն ինձ ասաց, որ նա մահացավ ոչ թե ինչ-որ բանից, այլ մոմի պես ուղղակի, բնականորեն հանգավ: Բայց Բունյուելը պատրաստ էր դրան: Նա մահկանացուն կնքեց 1983-ի հուլիսին: Երբ նույն տարվա փետրվարին ես եկա նրան հրաժեշտ տալու եւ ասացի, որ հոկտեմբերին կայցելեմ, Լուիսը պատասխանեց. «Չէ, մենք վերջին անգամ ենք տեսնվում»: Նա գրկեց ինձ: Հիշում եմ, որ մեր վերջին հանդիպման ժամանակ ես աչքս չէի կտրում նրանից, մինչ նա խոսելիս նայում էր ինձ, իսկ կինը՝ ժաննան եւ որդիները՝ Խուան Լուիսն ու Ռաֆայելը, նայում էին միայն Լուիսին: Դա բունյուելյան տեսարան էր, նրա ֆիլմերի այն բազմաթիվ զարմանահրաշ տեսարաններից մեկը, երբ հերոսները էկրանից շարունակ նայում են քեզ՝ հիշեցնելով, որ էկրանի շրջանակները լոկ պայմանականություն են, եւ իսկական իրականությունն այն կողմում է, ուրիշ, այլ բան պարունակող եւ ոչնչով չսահմանափակված: Մենք չենք տեսնում այդ իրականությունը, որովհետեւ չենք ուզում կամ չգիտենք, որ կարելի է դա տեսնել:

Լուիս Բունյուելի արվեստը մեզ սովորեցրեց տեսնել այն, ինչ կորցրել ենք, մոռացել կամ արհամարհանքի մատնել: Այդ ուրիշ աշխարհը լի է բշվառներով, այն առարածներով, որոնք ծածկված են մեր տեսադաշտից, մեր մոռացմանը, կուրությանն ու անտարբերությանը դատապարտված:

Վերջին հանդիպման ժամանակ ես հարցրի նրան.

- Ինչ հասկացաք, Լուիս, 83 տարի ապրելով:

- Որ կյանքս կտայի ճշմարտությունը փնտրող մարդու համար: Բայց կսպանեի նրան, ով կհավատար, թե հասու է եղել դրան:

Էջը պատրաստեց
ՍԱՎԵՆ ԲՈՅԱՋՅԱՆԸ

Լուիս Ֆիգու. «Մադրիդում զտա այն, ինչ փնտրում էի»

Լրացավ Մադրիդի «Ռեալի» եւ Պորտուգալիայի հավաքականի կիսապաշտպան Լուիս Ֆիգուի ծննդյան 31-ամյակը: Ծննդյան օրը նա նշեց Բելգրադում, որտեղ «Ռեալը» չեմպիոնների լիգայի մրցաշարի 4-rդ տուրում հանդիպեց տեղի «Պարտիզանի» հետ: Տոնական սեղանի շուրջ կայացած հարցազրույցը, կարծում ենք, կհետաքրքրի նաեւ մեր ընթերցողներին:

- Ծնունդդ շնորհավոր, Լուիս: Ժամանակն արագ է անցնում:

- Տարիներն անցնում են, բայց մեզ սովորեցնում են: Այդ ընթացքում շատ բան եմ սովորել: Ամեն տարի ավելի ու ավելի շատ պատմություններ են կուտակվում, որոնք հետագայում կարող ես պատմել ընկերներիդ ու երեխաներիդ:

- Լրատվամիջոցների համոզմամբ, երջանիկ ժամանակներ ես ապրում:

- Քննադատների կարծիքը երբեմն չի համընկնում իմ կարծիքին, չնայած միշտ հարկավոր է այն հարգել: Եթե քննադատությունը կառուցողական է, հարկ է այն ընդունել: Ամեն օր աշխատում եմ, որպեսզի ինձ լավ զգամ: Գործերն առայժմ լավ են ընթանում:

- Իսկ ա՞յս տարի:

- Մադրիդի «Ռեալում» քո առջեւ առավելագույն նպատակներ են դրված եւ քո վրա մեծ ճնշում է գործադրվում: Դու մշտապես պարտավոր ես բարձր խաղամակարդակին համապատասխանել եւ հաղթել այն մրցումներում, որոնց մասնակցում ես: Հաջորդ տարի կայանալու է Եվրոպայի առաջնությունը: Դա մեզ համար շատ կարեւոր է եւ մենք ամեն ջանք ու եռանդ կներդնենք, որպեսզի հաղթենք:

Մենք չենք կարող խոստանալ, որ անպայման կհաղթենք, քանի որ դա շատ բարդ խնդիր է. կան շատ հավականներ, որոնք մեզանից ուժեղ են: Սակայն մենք սեփական հարկի տակ ենք հանդես գալու եւ կաշխատենք որքան հնարավոր է հաջող խաղալ:

- Վերջերս դու հայտարարել ես, որ Եվրոպայի առաջնությունից հետո հրաժեշտ ես տալու հավաքականին:

- Զգում եմ, որ ընդունակ եմ շարունակելու ելույթներս հավաքականում: Սակայն մենք Բրազիլիան չենք, որը շատ ֆուտբոլիստներ ունի: Մենք պետք է ճանապարհը զիջենք երիտասարդներին, նրանց հնարավորություն ընձեռենք ընդգրկվելու հավաքականում: Չէ՞ որ ամբողջ կյանքում չենք խաղալու հավաքականում: Հավաքականին հրաժեշտ տալու որոշման վրա մինչ օրս էլ խորհում եմ: Իմ երկրում մենք մեծ հույսեր ենք կապել Եվրոպայի առաջնության հետ: Հարկավոր է հավաքականում ասիճանաբար թարմ ուժեր ընդգրկել, երիտասարդներին ճանապարհ տալ: Երբ հեռանամ հավաքականից, ինձ այլ կարեւոր գործերի կնվիրեմ:

- Քեզ երկու տարի կմնա, որպեսզի մտածես միայն Մադրիդի «Ռեալի» մասին:

- Իհարկե: Թեեւ այն մարդկանցից չեմ, որ ապագայի ծրագրեր են մշակում: Երբ հրաժեշտ տամ հավաքականին, բնականաբար, ավելի շատ ժամանակ կունենամ կենտրոնանալու «Ռեալում» ելույթներիս եւ ընտանիքիս վրա:

- Ինչպե՞ս ես գնահատում քո անցկացրած տարիները «Ռեալում»:

- Ժամանակ էր հարկավոր, որպեսզի մերվեի կոլեկտիվին: Առաջին տարին ծառայեց այդ նպատակին: Ինձ տվեց այն, ինչ փնտրում էի. աճեցի որպես ֆուտբոլիստ, տիտղոսներ նվաճեցի ինչպես անհատական, այնպես էլ՝ թիմային: Արդեն մեծ հեղինակություն ունեմ, ինչը փնտրում էի: Բացի այդ, հարկավոր է ֆինանսական կայունության մասին մտածել: Յուրաքանչյուրը պետք է իր ապագայի մասին մտածի:

- «Ռեալում» առաջին տարում հանդես գալով, դու արժանացար «Ոսկե գնդակին» եւ դարձար Իսպանիայի չեմպիոն:

- Ամեն ինչ շատ արագ անցավ եւ դա վերջին տարիներիս փոխհատուցումը դարձավ: Հաճույքով եմ հիշում այդ տարին: Երբ իմ խաղը կայունացավ, այդ տիտղոսներն ինձ համար յուրօրինակ նվերներ դարձան:

- Դու նաեւ նվաճել ես չեմպիոնների գավաթը:

- Մեր բախտը բերել է, որ տարվա ընթացքում ուրախանալու շատ առիթներ ենք ունենում: Չնայած այդ տարի մարզական իմ կենսագրությունում առաջին լուրջ վնասվածքի հետեւանքով շատ տուժեցի, բայց երբ հաղթեցինք չեմպիոնների լիգայի եզրափակիչում, մոռացա անհաջողությունները:

- «Ռեալում» 3-rդ տարին հանդես գալու ժամանակ թիմ եկավ Ռոնալդոն եւ դուք եւս մեկ անգամ նվաճեցիք չեմպիոնի կոչումը:

- Անցյալ տարին եւս հաջողակ էր, քանի որ մինչեւ վերջ պայքարեցինք չեմպիոնների լիգայում հաղթող ճանաչվելու համար, իսկ Իսպանիայի առաջնությունում չափազանց համառ մրցակցությունում նվաճեցինք երկրի չեմպիոնի տիտղոսը: «Ռեալ Սոսյեդադը» շատ հաջող անցկացրեց մրցաշրջանը: Չեմպիոնի կոչմանն արժանացանք շնորհիվ վերջնագծում ունեցած հաջող մրցելույթների: Որոշիչ նշանակություն ունեցավ այն, որ վերջնագծում այլեւս երկու ճակատով չէինք պայքարում:

- «Ռեալում» ընդգրկվելուց հետո յուրաքանչյուր մրցաշրջանում նախորդ տարվա համեմատ դու առաջադիմել ես: Նույնիսկ մարզչի փոփոխությանն ես ականատես եղել:

- Երբ նոր մարզիչը թիմն ընդունում է, որպես կանոն, սկսվում են տարբեր փորձարկումները: Դրանք դեռեւս նախապատրաստական փուլում սկսվեցին եւ, իմ կարծիքով, թիմին օգտակար էին, թեեւ մենք լիովին դեռ չենք ավարտել փորձարկումները: Յուրաքանչյուր տարի բոլոր թիմերն էլ ցանկանում են լուրջ մրցակից լինել: Եվ բարձրակարգ ֆուտբոլիստների առկայությունը նպաստում է դրան:

- Որպես Միչելի, Ռաուլի եւ Գուտիի ընկեր, ի՞նչ կարող ես ասել նրանց պայմանագրերի երկարաձգման մասին:

- Նրանք ողջ կյանքը խաղում են «Ռեալում» եւ ցանկանում են շարունակել ելույթներն այդ թիմում: Ի ուրախություն բոլորի, ամեն ինչ բարեհաջող ավարտվեց: Դրանից շահեց «Ռեալը», քանի որ այդ խաղացողները լիովին մերվել են ակումբին:

Կասպարովը զիջեց համակարգչին

Նյու Յորքում Գարի Կասպարովի եւ «Ֆրիտց-8» համակարգչային ծրագրի միջեւ ընթացող շախմատային մրցախաղի 2-rդ պարտիան 39-rդ քայլում ավարտվեց ոչխարհի 13-rդ չեմպիոնի պարտությամբ: Մասնագետների կարծիքով, այդ պարտիայում Կասպարովն իր լավագույն խաղը ցուցադրեց, սակայն ցայտնոտում, 32-rդ քայլում կոպիտ սխալ թույլ տվեց եւ ի վերջո պարտվեց: Շատերն այն համոզման են, որ եթե մրցախաղն ընթանար սովորական շախմատի խաղատախտակի շուրջ, եւ Գարին հնարավորություն ունենար քայլերը ձեռքով կատարելու, արդյոք նման սխալ թույլ չէր տա եւ մինչ ֆիգուրին ձեռք տալը, կնկատեր իր սխալը: Ինչեւէ, համակարգիչն անմիջապես օգտվեց այդ սխալից եւ ընդամենը 7 քայլ հետո համոզվելով, որ փրկություն չկա, Կասպարովը հանձնվեց: Մրցամարտի հաշիվը դարձավ 1,5-0,5՝ հօգուտ համակարգչի: Հիշեցնենք, որ մրցամարտն անցկացվում է 4 պարտիայից: Վաղը մրցակիցները կանցկացնեն 3-rդ պարտիան: Կասպարովը խաղալու է սպիտակ խաղաքարերով:

Աղասին գերազանցեց Նալբանդյանին

Ինչպես արդեն տեղեկացրել էինք, Հյուսիսոնում ընթացող թենիսիստների աշխարհի ոչ պաշտոնական առաջնությունում «կապույտ» խմբում խաղարկվող 2-rդ ուղեգիրը պետք է վիճարկեին Անդրե Աղասին եւ Դավիթ Նալբանդյանը: Նրանց միջեւ կայանալիք հանդիպումը պետք է որոշեր, թե թենիսիստներից ո՞վ է շարունակելու պայքարը կիսաեզրափակիչում: Հաջողությունն ուղեկցեց Աղասուն: Մրցախաղը համառ բնույթ կրեց: Առաջին խաղափուլում, միայն թայբրեյքում Աղասին կարողացավ գերազանցել մրցակցին՝ 7-6: Երկրորդ խաղափուլում Նալբանդյանը ռեւանշի հասավ (6-3): Վճռորոշ 3-rդ խաղափուլում Աղասին հաղթեց 6-4 հաշվով եւ մտավ կիսաեզրափակիչ: «Կապույտ» խմբից ժամկետից շուտ կիսաեզրափակիչի ուղեգիրը նվաճել էր շվեյցարացի Ռոժե Ֆեդերերը:

«Կարմիր» խմբում երկու տուրից հետո կիսաեզրափակիչի ուղեգրին տիրեց գերմանացի Ռայներ Շուլերը, որը երկրորդ խաղն էլ շահեց՝ պարտության մատնելով էնդի Ռոդիկին (4-6, 7-6, 7-6): Արգենտինացի Գիլերմո Կորիայի հաղթանակով ավարտվեց նրա մրցամարտն իսպանացի Կառլոս Մոյայի հետ (6-2, 6-3): Այս խմբից 2-rդ ուղեգրի հարցը կվճռվի Կորիայի եւ Ռոդիկի մրցախաղում, որոնք մեկական միավոր են վաստակել:

Ամերիկացի էնդի Ռոդիկը դարձավ 13-rդ թենիսիստը, որ տարին ավարտում է դասակարգման ցուցակի 1-ին տեղում: Մինչ այդ, տարբեր տարիներին լավագույնն են ճանաչվել Իլիե Նաստասեն (1973 թ.), Ջիմի Կոնորսը (1974-1978 թթ), Բյոռն Բորգը (1979-1980 թթ.), Ջոն Մաքինրոյը (1981-1984 թթ.), Իվան Լենդլը (1985-1987, 1989 թթ.), Մաթս Վիլանդերը (1988 թ.), Ստեֆան էդբերգը (1990-1991 թթ.), Ջիմ Կուրյեն (1992 թ.), Փիթ Սամփրասը (1993-1998 թթ.), Անդրե Աղասին (1999 թ.), Գուստավո Կուերտենը (2000 թ.) եւ Լլեյթոն Հյուիթը (2001-2002 թթ.):

Արիել Օրտեգան մտադիր է հրաժեշտ տալ ֆուտբոլին

Արգենտինայի հավաքականի կիսապաշտպան Արիել Օրտեգան մտադիր է հրաժեշտ տալ մեծ ֆուտբոլին, չնայած ընդամենը 29 տարեկան է եւ հնարավորություն ունի դեռ մի քանի տարի էլ խաղադաշտ դուրս գալու: Նման որոշման ֆուտբոլիստին դրդել է իր ներկայիս վիճակը: Արգենտինայի «Ռիվեր փլեյթում» հանդես եկող Օրտեգայի պայմանագրային իրավունքները պատկանում են «Ֆեներբախչեին»: Թուրքական ակումբը տրանսֆերի է հանել ֆուտբոլիստին սահմանելով անչափ բարձր գին՝ 6 մլն դոլար: Օրտեգան գտնում է, որ ոչ մի ակումբ նման գումար չի վճարի իր տրանսֆերի համար, ուստի ինքը հնարավորություն չի ունենա խաղալու որեւէ թիմում: Նշենք, որ իր վերջին հանդիպումը «Ֆեներբախչեի» կազմում նա անցկացրել էր այս տարվա փետրվարի 12-ին, որից հետո վերադարձել էր հայրենիք: Բացի այդ, թուրքական ակումբը Օրտեգայից 11 մլն դոլարի փոխհատուցում է պահանջում՝ պայմանագրի կետերով նախատեսված պարտականությունների չկատարման դիմաց: Ճիշտ է, հետագայում փոխհատուցման չափը թուրքերը նվազեցրին մինչեւ 6 մլն դոլար՝ հույս ունենալով ֆուտբոլիստից գանձել այդ գումարը:

Աշխարհի վերջին երեք առաջնություններում հանդես եկած Արիել Օրտեգայի համար ժամանակին «Ֆեներբախչեն» 15 մլն դոլար էր վճարել: Այդ գումարից 8 մլն-ը տվել էր ֆուտբոլիստին, 7 մլն-ը միմյանց միջեւ բաժանել էին «Ռիվեր փլեյթն» ու «Պարման»:

Գաջիեւը գլխավորեց «Կոիլյա սովետովը»

Սամարայի «Կոիլյա սովետովի» նոր գլխավոր մարզիչ է նշանակվել Գաջի Գաջիեւը: Թիմի գլխավոր մարզչի պաշտոնում նա կփոխարինի Ալեքսանդր Թարխանովին, որի հետ պայմանագրի ժամկետն ակումբի ղեկավարությունը չերկարաձգեց: Գաջիեւն ակումբի հետ 2 տարվա պայմանագիր է կնքել: Գաջիեւը մարզչական աշխատանքի մեծ փորձ ունի: Նա Սեուլի օլիմպիական խաղերի չեմպիոն ԽՍՀՄ հավաքականի մարզիչներից մեկն էր, 1999 թ. նրա գլխավորությամբ Մախաչկալայի «Անժին» հաջողության էր հասել ՈԴ առաջնությունում:

Ռոբսոնի համար գումար չգտնվեց

Նիգերիայի ֆուտբոլի ֆեդերացիան ստիպված էր հրաժարվել Բրայան Ռոբսոնին հավաքականի ղեկը վստահելու ծրագրից, քանի որ ի վիճակի չէ նրան խոստացած աշխատավարձը վճարելու: Ռոբսոնն օրերս պետք է կարճաժամկետ պայմանագիր կնքեր ֆեդերացիայի հետ, սակայն պարզվել է, որ մասնավոր հեռուստաընկերությունը չի կարող խոստացած 30 հազար դոլար աշխատավարձը վճարել: Այս մասին հայտարարել է երկրի սպորտի նախարար Մուսա Մոհամեդը:

Կլեմենտեին փոխարինեց Ֆեռնանդեսը

Իսպանիայի ազգային հավաքականի նախկին մարզիչ Խավիեր Կլեմենտեն ազատվել է «էսպանյոլի» գլխավոր մարզչի պաշտոնից: Նրա գլխավորությամբ թիմն անհաջող էր մեկնարկել երկրի առաջնությունում՝ 10 տուրից հետո 5 միավորով եզրափակելով մրցաշարային աղյուսակը: Կլեմենտեին փոխարինել է Լուիս Ֆեռնանդեսը, որը նախկինում մարզում էր «Պարի Սեն ժերմենը»: Կլեմենտեն «էսպանյոլի» ղեկը ստանձնել էր անցյալ մրցաշրջանի կեսերից՝ թիմին փրկելով ուժեղագույնների խմբին հրաժեշտ տալու վտանգից:

Մնացել է խաղարկելու 5 ուղեգիր

2004 թ. Պորտուգալիայում կայանալիք ֆուտբոլի Եվրոպայի առաջնության 16 մասնակիցներից 11-ն արդեն հայտնի են: Եզրափակիչ փուլում հանդես գալու իրավունք են նվաճել Եվրոպայի չեմպիոն Ֆրանսիայի, առաջնության կազմակերպիչ երկրի՝ Պորտուգալիայի, Շվեդիայի, Չեխիայի, Բուլղարիայի, Դանիայի, Գերմանիայի, Հունաստանի, Անգլիայի, Իտալիայի եւ Շվեյցարիայի ընտրանիները: Մնացած ուղեգրերի համար այսօր պայքարի մեջ կներգրավվեն 10 հավականներ, որոնք վիճակահանությամբ զույգեր են կազմել եւ 2 հանդիպումների արդյունքով կորոշեն հաղթողներին:

Մոսկվայում Ռուսաստանի ընտրանին կհյուրընկալի Ուելսի հավաքականին: Դա երկու երկրների հավաքականների մակարդակով առաջին պաշտոնական հանդիպումն է: Եզրափակիչ մտնելու դեպքում ՈԴ հավաքականին 1,2 մլն դոլար պարգեւավճար է խոստացված: Չնայած Ուելսի հավաքականը կազմի հետ կապված դժվարություններ ունի (վնասվածքների պատճառով խաղին չեն մասնակցի Քրեյկ Բելամին, Սայմոն Դեւիսը, Մարկ Փեմբրիջը, Ռոբերտ Փեյջը), սակայն հավաքականի գլխավոր մարզիչ Մարկ Հյուզը համոզված է, որ իր սաներն ընդունակ են լրջորեն դիմադրելու մրցակցին: Անկասկած, Ուելսի հավաքականի գլխավոր գործող անձը Ռայան Գիգզն է:

Իսպանիայի հավաքականը Վալենսիայի «Մեստալյա» մարզադաշտում կհյուրընկալի Նորվեգիայի ընտրանուն: Այս խաղը պատահականորեն չի ընտրվել: Իսպանիայի հավաքականը շատ հաջող է խաղում Վալենսիայում՝ 28 հանդիպումներից 17-ում հաղթելով մրցակիցներին: Վերջին անգամ իսպանացիները 4-0 հաշվով պարտության էին մատնել Ավստրիայի ընտրանուն: Որոշ ընդմիջումից հետո հավաքականի գլխավոր մարզիչ Ինյակի Սաեսը թիմ է հրավիրել Ռաուլ Բրավոյին եւ Գուտիին, ինչպես նաեւ Սեսար Մարտինին: Նորվեգացիների կազմում բացակայում է Օլե Գունար Սուլշերը:

Լատվիա-Թուրքիա մրցախաղում հաղթողի հավակնորդ են համարում թուրքերին: Լատվիացիներն էլ խաղին մասնակցելու են թուլացված կազմով: Որակազրկման պատճառով խաղադաշտ դուրս չեն գա պաշտպաններ Միխայիլ Զեմլինսկին եւ Չինտարս Չիրնիսը: Լավագույն ռմբարկու Մարիան Պախարն էլ վնասվածքի հետեւանքով չի կարող օգնել իր խաղընկերներին:

Մեծ հետաքրքրությամբ է սպասվում Շոտլանդիա-Հոլանդիա մրցավեճը: Շոտլանդացիների կազմում չի խաղա հավաքականի ավագ, «Սելթիկի» կիսապաշտպան Փոլ Լամբերտը, իսկ հոլանդացիների կազմում առայժմ հարցականի տակ է էդգար Դավիդսի եւ Ռուդ վան Նիստելրոյի մասնակցությունը: 5-rդ զույգը կազմել են Խորվաթիայի եւ Սլովենիայի ընտրանիները: Եթե Սլովենիայի ընտրանիում հիմնականում ընդգրկված են տեղացի ֆուտբոլիստները, ապա խորվաթների գլխավոր մարզիչ Օսո Բարիչը հրավիրել է 19 լեգեոների: Պատասխան հանդիպումները կկայանան նոյեմբերի 19-ին:

Էջը պատրաստեց ԱՐՈՍ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

ԱՍՈՒԼԻՍ

Հայցուցնացիա՞, թե՞ իրականություն

Նորայր Սարգսյանը, նույն ինքը Կարպանոն պնդում է, որ իրավապահները իրեն հալածում են

Արդեն 2-րդ տարին 6 ամիսը 1 անգամ Նյու Յորքի գիտությունների ակադեմիայի նորընտիր իսկական ակադեմիկոս Նորայր Սարգսյանը, նույն ինքը՝ հնչեղ ծածկանունով Կարպանոն, լրագրողների ու հասարակության լսողությունը ցնցում է իր արտասովոր հայտնագործության պատումներով: Հիշեցնենք, որ անցած տարի ասնանը նա հայտարարեց, թե առանց տանող հրթիռի գիտահետազոտական արբանյակ է արձակել տիեզերք: Արբանյակը սնող հոսանքի աղբյուրն իր նմանակը չունի համաշխարհային պրակտիկայում եւ 14-15 տարի ի վիճակի է աղահովելու դրա անընդմեջ աշխատանքը: Երեկ նորից ասուլիս էր հրավիրել Նորայր Սարգսյանը՝ այս անգամ այլ պատում ներկայացնելու: Նրա պատմելով, արդեն 8 ամիս ոստիկանության ու դատախազության աշխատողները հալածանք են սկսել իր դեմ: Նուբարաշենի քրեակատարողական մեկուսարանում մնացել է օգոստոսի 7-ից սեպտեմբերի 3-ը, մինչեւ վերաքննիչ դատարանի՝ կալանքն անօրինական համարելու վճռի ընդունումը: Ի՞նչն է պատճառը, ինչո՞ւ են հալածում նրան: Իր պատմելով, 2 գործարարներ, մեկը՝ գերմանահայ, մյուսը՝ տեղացի (մեկը մեքենաների վաճառքով է զբաղվում, մյուսը՝ ամանեղենի), եկել են իր մոտ եւ առաջարկել գյուղը վաճառել արտասահմանում: Նոյտակն էլեկտրականություն ստանալու հեղինակած տեխնոլոգիայի յուրացումն է եղել: Մի քանի անգամ Ն. Սարգսյանին տարել են Ուկրաինա, հետո իբրեւ գնորդի ներկայացրել են մի գերմանացու, որը, պարզվել է (իր համառ ջանքերի շնորհիվ), գերմանական հետախուզական ծառայությունների գործակալն է՝ գնդապետ Բոգոսլավսկի ֆոն Գեորգ էդուարդը: Վերջինս խոստացել է 300 մլն եվրո փոխանցել շվեյցարական բանկ, բայց, իհարկե, չի արել: Ինքը վռնդել է բոլորին: Սպառնացել են, թե կդիմեն դատական ատյաններին, որովհետեւ 35-40 հազար դոլար են ծախսել իր վրա (Ուկրաինա 4 այցերի ընթացքում): Հիմա, համագործակցելով ոստիկանության հետ, հանգիստ չեն տալիս իրեն: Ն. Սարգսյանը փաստը որակում է իբրեւ ոստիկանության եւ օտարերկրյա գործակալների համատեղ սադրանք՝ իր դեմ:

Մտավարժա՞նք է, թե՞ իրականություն՝ դժվար է ասել: Բայց ճշմարտություն է նաեւ, որ Արաբկիրի դատարանում նոյեմբերի 25-ին դեռմի առթիվ հարուցված առաջին դատական նիստն է գումարվելու: Ցանկացողները կարող են ներկա լինել՝ սեփական մտքի ու երեւակայության կարողությամբ պարզելու իրականության եւ անիրականի չափաբաժինն այս տարօրինակ պատմության մեջ:

Կ. Դ.

ԹԲԻԼԻՍԻ

«Երբեք չեմ արժանանա Չաուշեսկուի եւ Միլոշեւիչի ճակատագրին»

Սկիզբը՝ էջ 1

«Մենք սպասում ենք, որ Շեւարդնաձեն ընդունի, թե խորհրդարանական ընտրությունները ձախողվել են եւ նշանակի նոր ընտրություններ», ըստ Civil.ge էլեկտրոնային թերթի, ցուցարարների առաջ ասել է Բուրջանաձեն:

«Ես կոչ եմ անում Վրաստանի յուրաքանչյուր քաղաքացու հայտարարել քաղաքացիական անհնազանդություն գործող վարչակարգի դեմ: Ես ոստիկանությանը եւ բանակին կոչ եմ անում չհնազանդվել իշխանությունների կարգադրություններին», ասել է Սահակաշվիլին, կոչ անելով Շեւարդնաձեին դուրս գալ ժողովրդի առաջ եւ համոզվել, որ վրաց ժողովուրդը նրա հրաժարականն է պահանջում:

Ըստ Ինտերֆաքս գործակալության, ցուցարարների մի խումբ Սահակաշվիլու հորդորով փորձել է գրոհել նախագահի նստավայրը, սակայն վրացական ներքին զորքերի ստորաբաժանումները կանխել են հարձակումը: Նախագահի նստավայրը շարունակում է շրջափակված մնալ զորքերով եւ զրահամեքենաներով:

Վրաստանի ներքին գործերի նախարար Կոբա Նարչեմաշվիլին պաշտոնացել է, թե հասարակական կարգը պաշտպանողների դեմ զինված հարձակման դեպքում զորքն իրավունք ունի համարժեք պատասխան տալու:

Արդեն երկրորդ օրն է Մոսկվայում ռուս պաշտոնյաների հետ խորհրդակցություններ է անցկացնում Աջարիայի առաջնորդ Ասլան Աբաշիձեն: Նա այսօր երկու անգամ հանդիպել է ՌԴ արտգործնախարար Իգոր Իվանովի հետ:

Երեկ երեկոյան կայացել է վերջին մեկ շաբաթում էդուարդ Շեւարդնաձեի եւ Վլադիմիր Պուտինի երկրորդ հեռախոսազրույցը: Պուտինը հույս է հայտնել, որ Վրաստանում կայունությունը կպահպանվի:

ԽՆԴՐՈՒՄ ԵՆՔ բոլոր կազմակերպություններին եւ քաղաքացիներին Գագիկ Հայկազի Գեզալնյանի (ծնվել է 1952 թ., բնակվել է Երեւանի Լենինգրադի փողոցի 23 շենքի թիվ 14 բնակարանում) վերաբերյալ տեղեկությունները հայտնել Արաբկիր եւ Քանաքեռ-Զեյթուն համայնքների առաջին ատյանի դատարան կամ զանգահարել 24-01-61 հեռախոսահամարով:

For Your Internal News of Armenia Log on to

www.azg.am

In Armenian, English, Russian and Turkish

ՀՀ ԿԲ խորհրդի նիստում

ԿԲ խորհուրդը նոյեմբերի 14-ի նիստում, որը վարում էր բանկի նախագահի տեղակալ Ա. Ջավադյանը, որոշեց ի գիտություն ընդունել ՀՀ ԿԲ 2003 թ. ծախսերի նախահաշվի ու կապիտալ ներդրումների ծրագրի 9 ամսվա կատարողականը եւ հաստատել ՀՀ ԿԲ 2003 թ. երրորդ եռամսյակի ֆինանսական հաշվետվությունը, որը կհրապարակվի սահմանված կարգի համաձայն:

ՀՀ ԿԲ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

United Nations Development Programme

UNDP

ՄԱԶԾ-ի հայաստանյան գրասենյակը ցանկանում է գնել սննդամթերքի փաթեթավորման վակուումային սարք հետեւյալ.

- աշխատանքային ծավալը՝ 3-ից մինչեւ 5 լիտր
- արտադրողականությունը՝ 1-2 փաթեթ / րոպե
- վակուումի հզորությունը՝ 10-20 մ3 / ժամ

Ցանկացողները կարող են ներկայացնել իրենց գնային առաջարկները մինչեւ սույն թվականի նոյեմբերի 20-ը, փակ ծրարով, հետեւյալ հասցեով՝ Կարլ Լիբկնեխտի 14, ՄԱԶԾ-ի գրասենյակ, հեռ. 56 60 73 +119 Գագիկ Շահինյան

gtz

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀՐԱՎԵՐ

Սննդաթրահովման, տարածքային համագործակցության եւ Հարավային Կովկասում կայունության ծրագիրը (ՍՏՀՀԿԿԾ/FRCS) հայտարարում է մրցույթ **«Համայնքների զարգացում, կարողությունների ուժեղացում եւ տեղական հակամարտությունների կառավարում» ոլորտներում խորհրդակցի** թափուր աշխատատեղի համար (աշխատավայրը՝ Իջեւան, Տավուշի մարզ, Հայաստան):

Հիմնական պարտականություններն են՝

- աջակցել Տավուշի մարզի համայնքներին՝ տեղական ինքնակառավարման կարողությունների եւ համայնքային կառույցների ուժեղացման գործում
- բացահայտել կարողությունների զարգացման միջոցառումների ազդեցությունները եւ հետագա կարիքները տեղական մակարդակով՝ ներառելով քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներին
- կատարել տեղական հակամարտությունների ուսումնասիրություններ, վերլուծություններ, մոնիտորինգ եւ ներկայացնել առաջարկներ
- կազմակերպել հանդիպումներ, ժողովներ, քննարկումներ, պատրաստել (հայերեն, ռուսերեն եւ անգլերեն) հաշվետվություններ եւ զեկույցներ:

Ներկայացվող պահանջներն են՝

- բարձրագույն կրթություն եւ/կամ աշխատանքային մեծ հմտություններ տնտեսագիտության, համայնքների զարգացման կամ դրանց հետ առնչվող ոլորտներում
- հայերեն, ռուսերեն եւ անգլերեն լեզուների բանավոր եւ գրավոր վարժ իմացություն /պարտադիր է/
- վերլուծություններ կատարելու, խորհուրդներ տալու եւ փաստաթղթեր նախապատրաստելու ունակություններ ու հմտություններ
- համակարգչի իմացություն /MS Office 2000/
- անկախ /անձնական նախաձեռնություններով/ եւ որոշես թիմի անդամ աշխատելու ունակություններ
- անկաշկանդ հաղորդակցվելու ունակություն
- միջազգային կազմակերպություններում կամ դրանց հետ աշխատանքի փորձ /ցանկալի է/
- չնորմավորված աշխատանքային ժամերով եւ ծանրաբեռնված աշխատելու, հաճախակի գործուղումների մեկնելու հնարավորություն:

Դիմումների ներկայացման վերջին ժամկետը՝ ս/թ դեկտեմբերի 1-ն է: Ներկայացված պահանջներին համապատասխանող, ընտրված թեկնածուները կհրավիրվեն հարցազրույցի: Հետաքրքրված անձինք պետք է նամակ-դիմումը, ինքնակենսագրությունը, երաշխավորագրերը եւ մնացած փաստաթղթերը ներկայացնեն ՍՏՀՀԿԿԾ-ի Երեւանի կամ Իջեւանի գրասենյակներին, հետեւյալ հասցեներով՝

ք.Երեւան, Կառավարության շենք-3, 328 սենյակ, հեռ. 54 30 61, ֆաքս՝ 54 31 60

ք.Իջեւան, Վալանսի1, հեռախոս՝ (063) 3 13 19, ֆաքս՝(063) 3 32 12,

էլ.փոստ՝ frcsarm@arminco.com

Հայտարարություն

ՀՀ կենտրոնական բանկը ՀՀ ձեռնարկությունների գործունեության հետազոտության իրականացման նպատակով պատրաստվում է իրականացնել վիճակագրական հարցում, ինչի հետ կապված հայտարարում է մրցույթ պայմանագրային աշխատակիցներ ներգրավելու համար:

Աշխատանքի բնույթը.

- այցելություն ընտրանքային կարգով ընտրված ձեռնարկություններ՝ տեղում հարցումն իրականացնելու եւ հարցաթերթիկները լրացնելու նպատակով,
- հարցման արդյունքների մուտքագրում համակարգիչ, սուրգում եւ ծրգրում:

Անհրաժեշտ պահանջները.

- բարձրագույն տնտեսագիտական կրթություն,
- մակրոէկոնոմիկայի եւ միկրոէկոնոմիկայի հիմունքների իմացություն,
- ձեռնարկությունների ֆինանսական վերլուծություն տնտեսական վիճակագրության հիմունքների իմացություն,
- MS EXCEL եւ MS WORD համակարգչային փաթեթների բավարար իմացություն:

Դիմումները սորտեւ ներկայացված փաստաթղթերի հետ, մինչեւ նոյեմբերի 18-ը, ներկայացնել ՀՀ ԿԲ աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժին.

- Դիմում
- Անձնագրի պատճեն
- Ինքնակենսագրություն
- Դիպլոմի եւ դիպլոմի միջուկի պատճեն
- Երկու գունավոր լուսանկար (3X4)
- Զինվորական գրքույկ
- Կադրերի հաշվառման անձնական թերթիկ

Անհրաժեշտության դեպքում զանգահարել հետեւյալ հեռախոսահամարներով՝

Անձնակազմի կառավարման բաժին՝ 56 14 40

Վիճակագրության վարչություն՝ 58 95 15

ԿԲ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Գովազդի համար զանգահարել՝ 58-24-83

«Գինդ» տպագրատուն, Երեւան, Բագրատունյաց 70ա Գրանցման թիվ 65. Դասիչ 69150. Տպաքանակը՝ 3000 Ստորագրված է տպագրության՝ 13. 11. 2003 Գինը՝ 100 դրամ